

ԵՐՈՒՍԱԿԵՄ, 20 (ԱՅՓ).- Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը Ուրբաթ օր յայտարարեց, որ պաղեստինեան արմատական շարժումները սանձելու ամերիկեան պահանջին դիմաց Սուրիոյ պատասխանը եղած է ամբողջութեամբ անբաւարար եւ թէ այդ կեցուածքին պատճառով Ուաշինկթըն - Դամասկոս կապերը պիտի մնան յարուած:

Փաուլը ըսաւ, որ վերջերս Դամասկոս իր այցելութենէն ի վեր, Սուրիա շատ փոքր քայլեր առած է պայքարելու համար արմատական շարժումներուն եւ ահաբեկչութեան դէմ: Փաուլը դիտել տուաւ, որ Սուրիա խոստացած էր գործակցիլ, սակայն անոր որդեգրած միջոցառումները ցարդ անբաւարար են: Փաուլը աւելցուց, որ Ուաշինկթըն կը շարունակէ այս հարցը հետապնդել եւ ճնշումներ կը բանեցնէ Դամասկոսի վրայ, որպէսզի աւելի ապրոյթ քայլեր առնէ անսանձելու համար պաղեստինեան արմատական շարժումները եւ փակելու անոնց գրասենեակները:

ՍՈՖԻԱՅԻ ՄԷՁ

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՅՈՒՏ ԵՒ ՍԻՄԵՈՆ Բ. ՎԱՐՉԱՊԵՏ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ



Նախագահ Կոր. Էմիլ Լախուտ, որ եռօրեայ պաշտօնական այցելութեամբ կը գտնուի Պուլկարիա, երէկ Սոֆիայէն մեկնեցաւ Վառնա, ուր դիմաւորուեցաւ Վառնայի կառավարիչին եւ քաղաքապետին կողմէ:

Մայրաքաղաք Սոֆիայի մէջ նախագահ Լախուտ նախքան Վառնա իր մեկնումը դռնփակ հանդիպում մը ունեցաւ Պուլկարիոյ վարչապետ Սիմէոն Բ. Վարնա, «Վարնա» պալատին մէջ: Հանդիպումին ներկայ գտնուեցաւ փոխ վարչապետ Իսաւ Յարէն:

Քննարկումի առարկայ դարձան լիբանանեւ-պուլկարական երկկողմանի յարաբերութիւններու կապուած հարցեր, ինչպէս նաեւ շրջանային վերջին իրադարձութիւնները եւ անոնց հանդէպ Լիբանանի ու Պուլկարիոյ կեցուածքները: Արձանագրուեցաւ նաեւ երկու երկիրներու մի-

Շար.՝ էջ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ԼՈՒՐՋ ՆԵՐՈՒԺ ՈՒՆԻ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ լրագրողներու հետ ունեցաւ հանդիպում մը, որուն ընթացքին անդրադարձաւ Հայաստանի ներքին բեմի քաղաքական նորագոյն վարձագումներուն:

Նախագահ Քոչարեան համոզում յայտնեց, որ համաձայնական կառավարութիւնը պիտի գոյատևէ, որովհետեւ ի տարբերութիւն 1999ի ընտրութիւններուն, այս անգամ դաշինքը կազմուած է քաղաքական ուժերու միջեւ: «Նախորդ դաշինքը երկու անձերու միջեւ էր, եւ հակառակ անոր որ անոնք պղծեցիկ էին, դաշինքը երկարատեւ չեղաւ», նկատել տուաւ նախագահ Քոչարեան: Ան իրատեսական նկատեց համաձայնական կառավարութեան ծրագիրը:

Քոչարեան նշեց, որ քաղաքական նորաստեղծ դաշինքի ստեղծման մէջ դեր ունենայով, պիտի զօրակցի դաշինքի կայացման եւ պիտի բաժնեկցի դաշինքի պատասխանատուութիւնը եւ յաջողութիւնները: Ան ընդգծեց, որ դաշինքը յուրջ ներուժ ունի եւ աշխատանքները պէտք է ընթանան համագործակցաբար:

Ինչ կը վերաբերի ընդդիմութեան, նախագահ Քոչարեան «Արդարութիւն» դաշինքի եւ «Ազգային Միաբանութիւն» կուսակցութեան Ազգային ժողովի նիստերուն չմասնակցիլը նկատեց ժողովուրդի քուէներու ոտնահարում, որովհետեւ «ժողովուրդը քուէ տուած է պատգամաւորներուն՝ Ազգային ժողովի նիստերուն մասնակցելու համար»:

Ռոպէրթ Քոչարեան ըսաւ, որ ընդդիմադիր ուժերը յուրջ դերակատարութիւն պէտք է ունեն-

Շար.՝ էջ 2

ՀԱՄԱՍ ԶԻՆԵԱԼ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ ՄԸ ՀԱԿԱԶԴԵՑ ՓԱՌԸԼԻ ԵՒ ՇԱՐՈՆԻ ԿՈՉԵՐՈՒՆ ՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը բանակցութիւններու ձեռնարկեց պաղեստինցի եւ իսրայէլացի պաշտօնատարներու հետ՝ օժանդակելու համար պաղեստինեւ-իսրայէլեան տագնապին լուծման, ինչպէս նաեւ՝ արագացնելու համար գործադրութիւնը խաղաղութեան ճամբու քարտէսին:

Փաուլը, որ Յորդանանէն երոսաղէմ ժամանած էր, պահանջեց մեծ յոյսեր չկապել իր այցելութեան, որմէ նուաճուածներ չեն ակնկալուիր: Ան դիտել տուաւ սակայն, որ պէտք է յոյսով հետեւիլ պաղեստինեւ-իսրայէլեան բանակցութիւններուն, որոնք յառաջիկային կ'արձանագրեն, յատկապէս՝ իսրայէլեան ուժերը պաղեստինեան շրջաններէն հեռանալու հարցին գծով: Փաուլը ըսաւ, որ պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն միջեւ գոյութիւն ունեցող տարակարծութիւններն ու հարցերը սկսած են նուազիլ:

Երոսաղէմի մէջ Փաուլը տեսակցութիւններ ունեցաւ վարչապետ Արիէլ Շարոնի եւ արտաքին գործոց նա-

Շար.՝ էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՊՈՒԱԾ ԶԱՐԳԵՐԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՂՈՒՄԻ ԶՈՒՆԻՍԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՄԷՁ

Հ. Յ. Գ. Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ, Հայաստանի Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի նախագահ ընկ. Արմէն Ռուստամեան լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին երէկ յայտնեց, որ Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի Յունիսի նիստի օրակարգին մէջ ներառուած են հարցեր, որոնք կ'առնչուին Հայաստանին:

Ռուստամեան տեղեկացուց, որ նիստին ընթացքին պիտի ներկայացուի Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն մասին վեհաժողովի նախագահին վեկուցումը, որուն շուրջ քննարկում կ'ընայ ծաւալիլ:

Պիտի քննարկուի նաեւ հակամարտող շրջաններու մէջ մարդկային իրաւանց պաշտպանութեան ուխտի թերի կիրարկման կամ բնա չկիրարկման հարցը: Ռուստամեան յայտնեց, որ թէեւ նախապէս Լեռնային Ղարաբաղը կը

Շար.՝ էջ 2

Հ. Յ. Գ. ՊԻՏԻ ԶՎԱՐԱՆԻ ԶԻՆՈՎՆԻԿՆԵՐՈՒ ՀԵՏ ԻՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍՐԵԼԷ, ԵԹԷ ԱՅԴ ՄԷԿԸ ԿԸ ՆՊԱՍՏԷ ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՊԱՅՔԱՐԻ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ

Կ'ԸՍԵ ԸՆԿ. ԱՐՄԵՆ ՌՈՒՍՏԱՄԵԱՆ

Հայաստանի Ազգային ժողովի Հ. Յ. Գ. խմբակցութեան ներկայացուցիչներ երէկ մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտարարեցին, որ խմբակցութիւնը Ազգային ժողովի գործունէութեան մէջ կարելոր պիտի նկատէ յատկապէս ընկերային, պետաիրաւական եւ արտաքին

յարաբերութիւններու վերաբերող օրինագիծերը եւ հարցերը, ինչպէս նաեւ պիտի վերանայի Հ. Յ. Գ. խմբակցութեան կողմէ ներկայացուած այն բոլոր նախագիծերը, որոնք մնացած են նախորդ նստաշրջանէն:

Հ. Յ. Գ. Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ, Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու վերաբերող օրինագիծերը եւ հարցերը, ինչպէս նաեւ պիտի համագործակցի բոլոր խմբակցութիւններուն հետ»:

Շար.՝ էջ 3

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՍՏԱՅԱԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ԲՈՒԷՆ

Երէկ կայացաւ Հայաստանի Ազգային ժողովի առաջին լիազուցման վերջին նիստը, որուն ընթացքին Ազգային ժողովի նախագահը յայտարարեց, որ Հայաստանի կառավարութեան գործունէութեան ծրագիրը ընդունուած է, որովհետեւ Ազգային ժողովին մէջ անոր ներկայացումէն ետք, 24 ժամուան ընթացքին անոր նկատմամբ անվստահութեան նախագիծ չէ ներկայացուած: Նիստէն դարձեալ կը բացակայէին ընդդիմադիրները՝ «Արդարութիւն» դաշինքի եւ Ազգային Միաբանութիւն կուսակցութեան պատգամաւորները:

Խօսք առաւ վարչապետ Անդրանիկ Մարգարեան, որ կառավարութեան անունով շնորհակալութիւն յայտնեց պատգամաւորներուն՝ վստահութեան համար:

Հայաստանի Ազգային ժողովի մշտական յանձնաժողովները երէկ գումարեցին իրենց առաջին նիստերը: Ազգային ժողովի գիտութեան, կրթութեան, մշակութիւն եւ երիտասարդութեան հարցերու մշտական յանձնաժողովի փոխ նախագահ ընտրուեցաւ Հ. Յ. Գ. խմբակցութեան անդամ, արձակագիր Ռուբէն Յովսէփեան: Անոր թեկնածութիւնը յանձնաժողովի անդամները պաշտպանեցին միաձայնութեամբ: Ռուբէն Յովսէփեան Համապային Կրթական-Մշակութային Միութեան Կեդրոնական վարչութեան անդամ է, միաժամանակ կը խմբագրէ «Նորք» ամսագիրը:

Երէկ կայացուեցան նաեւ Ազգային ժողովի միջխորհրդարանական պատուիրակութիւնները եւ յանձնաժողովներու կազմերը, մասնակցութեամբ Ազգային ժողովի բոլոր, ներառեալ ընդդիմադիր ուժերուն:

ԱԿՆԱՐԿ ԶԱԽՈՂ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՅՑ ԿԱՅԱՅԱԾ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ

Անգարայի թեպեանական ծրագիրի «Երկխօսութեան» ժողովը Արեւելեան Ամերիկայի յաջողութիւններէն ետք, լարուած է Լոս Անճելըսի հայ կեանքին մէջ եւ այս անգամ ներառած հոն գործող հայ հոգեւոր թէ հանրային կազմակերպութիւններու ներկայացուցիչները: Հաւանաբար շուտով կ'երեւի նաեւ յառաջիկայ թրախ-միջավայրը, ուր հայկական կողմին պիտի յղուին հիւպատոսական կամ դեսպանութեան մակարդակի երկխօսութեան հրաւերները:

Պատահական պէտք չէ թուի Անգարայի իշխանութիւններուն կողմէ Սփինոքայի քաղաքական կազմակերպութիւններու հետ տեսակցութիւններու համար Միացեալ Նահանգներ գործուող լուծման թեպեանի անձին ընտրութիւնը:


Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան այս պաշտօնատարը, Պարուի մէջ Թուրքիոյ նախկին դեսպանն էր. առ այդ ան խորապէս ծանօթ է իր դիւանագիտական կենսափորձով իսկ թէ՛ Հայկական Յեղասպանութեան, թէ՛ Արցախեան հակամարտութեան եւ թէ՛ ընդհանրապէս հայ-թուրք-պերի յարաբերութիւններու թղթածրարներուն:

Անձնաւորութեան ընտրութիւնը մտածել կու տայ բնականաբար, որ հայ-թուրք յարաբերութիւններու այս աշխուժացման գործընթացին շուտով կը ներառուի նաեւ հայ-պերի յարաբերութիւններու կամ Արցախի հակամարտութեան հիմնահարցը:

Թեպեանի հանդիպումներուն արագօրէն արձագանգած է արդէն պարպեյձանական մամուլը: Արպեյձանական քաղաքական թէ յրատուական շրջանակները անդադր կ'արժարծեն նման յարաբերութիւններ ի հեճուկ Արպեյձանի ընթացք չստանալու մտահոգութիւնը: Մինչ, Թուրքիոյ արտաքին գործոց փոխ նախարարը կը հաստատէր, որ հայ-թուրք յարաբերութիւնները որեւէ ձեւով պիտի չյանգին Անգարայի կողմէ գոյութիւն չունեցած Հայկական Յեղասպանութեան ճանաչումին:

Թրքական եւ պարպեյձանական կեցուածքները անփոփոխ են: Հայկական Յեղասպանութեան հիմնահարցին նկատմամբ թերեւս փոխուած է Անգարայի մարտավարութիւնը, որ յաջողած է երկխօսութիւն ստեղծել կարգ մը հայ հասարակական-քաղաքական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ: Անփոփոխ են նաեւ հայկական կողմին թուրքերու հետ բնականոն յարաբերութիւններ ստեղծելու նախապայմանային մտտեցումները: Փոխուած է սակայն թուրքերու հետ երկխօսութիւն հասկացողութեան նկատմամբ Միացեալ Նահանգներու Արեւելեան թէ Արեւմտեան շրջաններուն մէջ գործող կարգ մը հայ հասարակական-քաղաքական կազմակերպութիւններու կեցուածքը: Չախողած են բանակցութիւնները, կայացած է սակայն երկխօսութիւնը:

«Ա.»



85 ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՏՕՆ

Հովանաւորութեամբ՝
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՐԱՓԱՌԻ
(Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ)

Նախագահութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(Բարեչափ Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Կազմակերպութեամբ՝
Հ. Մ. Ը. Մ. Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 22 Յունիս 2003,
երեկոյեան ժամը 6:30ԷՆ սկսեալ,
Պուրճ Համուտի Բաղաքապետարանի դաշտին վրայ:

ՍՈՒՏԸ ԱԶՍ

ԵՐՈՐԱՅԹԵՍԻ ՍԵՋ

ՀԱՐԻՐԻ ՆԱԽԱԳԱՀԵՅ ՄԱՁՈՒԹՈՎ ԲԱՆՈՂ ՎԱՆԵՐՈՒ ԹՂԹԱԾՐԱՐԸ ՔՆՆԱՐԿՈՂ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԺՈՂՈՎԻՆ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկվ Քորաթեմի մէջ նախագահեց մայրութով բանող վան էրու թղթածրարի քննարկումը շարունակող նախարարական յանձնախումբի ժողովին, որուն ներկայ գտնուեցան էլեւմտեցի նախարար Ֆրանսու Միտրալ, կենսոլորտի նախարար Ֆարէս Պուէյպ, ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Ալյուպ Հրամայէտ, հանրօգուտ շինութեան եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժիպ Միքաթի, պետական նախարարներ Միշէլ Մուսա եւ Ասէմ Քանու, ինչպէս նաեւ նախարարաց խորհուրդի ընդհանուր քարտուղար Սուհէյլ Պուժի:

Յանձնախումբը թղթածրարին քննարկումը պիտի շարունակէ յառաջիկայ Երեքշաբթի: Վարչապետ Հարիրի երկվ ընդունեց Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպան Հիւսէյն Տարրարը, Գերմանիոյ դեսպան ժիլյէլա Քամիֆֆին եւ Փարսիանի դեսպան Խալէտ Մոհամէտ Միրը, որոնց հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ նախարար Միշէլ Սըւահա երկվ ընդունեց Հրպայիլայի տեղեկատուական միատնային ներկայացուցիչները՝ պատկերասփիւռի «Մանար» կայանի տնօրէն Մոհամէտ Հայտարը, մայնափիւռի «Նուր» կայանի տնօրէն Եուսէֆ Չէյնը եւ «Մանար» յուրերու պատասխանատու Հասան Ֆատայիլան, որոնց հետ քննարկեց տեղեկատուութեան առնչուող հարցեր:

ՄՐՏԱՔԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երկվ ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Պորիս Պոլոթնիկը, որուն հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ խաղաղութեան միջազգային քառեակի յառաջիկայ ժողովին կազմած հարցեր:

ՀԸՉՊԱԼԼԱՅԻ հոգեւոր պետ Մոհամէտ Հիւսէյն Ֆատայիլա երկվուան իր քարոզի մէջ շեշտեց, որ դիմադրութիւնը գիտակցութեան եւ առարկայականութեան շրջագիծէն ներս կը գործէ եւ կը ներկայացնէ իսրայէլեան վտանգներուն վերջ դնող կամ դիմադրող կարեւոր ազդակ մը:

Ֆատայիլա երկվ ընդունեց Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիփ Լը Քուրթիէն, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային հարցերը, յատկապէս պաղեստինեիսրայէլեան տագնապը եւ իրաքի վարձագումները:

ՀԱՆՐՕԳՈՒՑ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժիպ Միքաթի երկվ նամակ մը յղեց ընդհանուր դատախազ Ատնան Ատտուժի եւ անկէ խնդրեց պատկերասփիւռի «Նիու Թի. 4ի.» կայանի անցեալ Չորեքշաբթի օրուան երկվոյեան յուրերէն հաղորդումը Պէյրութի միջազգային օդակայանին մէջ օրինապահութիւններու մասին յուրին ճշգրտութեան մասին հետաքննութիւններ կատարել եւ յայտնաբերել յիշեալ օրինապահութեանց պատասխանատունը:

Միքաթի Ատտուժի յղեց նաեւ տեսաերկ մը, որ կ'ընդգրկէ Չորեքշաբթի օրուան յուրերուն յայտագիրը:

ՀԱՆԴԻՍԱԴՈՐ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՈՐՀՆԵՔ

Կիրակի, 22 Յունիս 2003ին, Զահլէի Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ Սուրբ եւ ամսահ պատարագ պիտի մատուցուի Սրբոյն Եօր Մերոյ Գրիգոր Լուսաւորիչին յիշատակ էլանելոյն ի վիրապէն տօնին առթով:

Պատարագին պիտի հանդիսապետ եւ քարոզ՝ ԳԵՐՃ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին)

Կը իրաւորեց հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու Սուրբ եւ ամսահ պատարագին եւ հաղորդուելու սրբազան հօր պատգամով:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ ԶԱՇԼԵՒ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԱՀԱԶԴ

ԼՕԽի «Հայաշէն» մասնաձեւի վարչութիւնը կը գուժէ իր շրջանի վատակաւոր ընկերուհիներէ՝

ԱԼԻՍ ՉԻԹԻԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 19 Յունիս 2003ին:

ՄԱՀԱԶԴ

Տիար Քրիստափոր Ոսկանեան Տէր եւ տիկին Ռոստոմ Ոսկանեան եւ զաւակունք Տիկին Ռուբինա Չատրըճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Յարութիւն Քէշիշեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Վարանդ Ոսկանեան եւ զաւակունք Ասիլեան ընտանիք Ճիգմէճեան ընտանիք Յովակիմեան ընտանիք եւ համայն զազականներ կը գուժեն իրենց եղբոր եւ հարազատին՝

ՍԻԱՄԱՆԹՕ ԳԱՂԵՒԿ ՈՍԿԱՆԵԱՆԻ (ՈՍԿԱՆ)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 18 Յունիս 2003ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան պաշտամունքը կատարուեցաւ Հինգշաբթի, 19 Յունիս 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Մարաշի Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Հայ Աւետարանական գերեզմանատունը: •Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՅՈՒՏ ԵՒ ՍԻՄԵՈՆ Բ. ՎԱՐՉԱՊԵՏ...

Ծարուակուած Ա. Էջէն

ջել գործակցութեան ամրապնդումը Ֆրանսաիօս Երկիրներու կապակերպութեան ծիրէն ներս, նկատի ունենալով, որ Լիբանան մինչեւ 2004 կը նախագահէ համաձայն կապակերպութեան մէջ լիբանանեւ-սուրիական յարաբերութիւնները օրինակելի են:

ըսաւ, որ արաբական երկիրներ պէտք է աշխատին իրենց հաւաքական շահերը իրականացնել առանց վստահելու այլ երկիրներու: Ան աւելցուց, որ նշեալ գործակցութեան մէջ լիբանանեւ-սուրիական յարաբերութիւնները օրինակելի են:

կիր մըն է, որ կը պայքարի ահաբեկչութեան դէմ, սակայն պէտք է գիտակցիլ ահաբեկչութեան եւ դիմադրութեան միջեւ գոյութիւն ունեցող յստակ տարբերութեան:

Երեկոյեան, Վառնայի քաղաքապետին կողմէ ընթրիք մը սարքուեցաւ ի պատի նախագահ Լահուտի, Լիբանանի Առաջին տիկին Մարի Լահուտի եւ անոնց ընկերակցող պաշտօնական պատրիարկութեան:

Անդրադառնալով հարաւային Լիբանանի մէջ սահմանային բախումներուն, նախագահ Լահուտ ընդգրծեց, որ Լիբանան եր-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ...

Ծարուակուած Ա. Էջէն

նան երկրին կեանքին մէջ: «Քննադատելով եւ վերլուծելով սխալները, պատճառ ժողովուրդին ներկայացնելով՝ ընդդիմութիւնը հետեւողական ձեւով պէտք է իշխանութեան վրայ գտնուող կուսակցութիւններուն համար. «յաւ, աւելի աշխուժ եւ արդիւնաւէտ աշխատանք տանելու պարտադրող ուժ ըլլալ», նշեց նախագահը: Ան չբացառեց տարբեր ծրագիրներու շուրջ իշխանութիւններու եւ ընդդիմութեան մտեցումներու զուգորդումը, օրինակ՝ Եւրոպական խորհուրդի, Հայաստան - Սփիւռք յարաբերութիւններու, Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ծիրէն ներս: Քոչարեան շեշտեց, որ այս հարցերը պէտք է անջատել այն խնդիրներէն, որոնց համար ուղղակիօրէն պատասխանատու է գործադիր իշխանութիւնը:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈԼԷԾ ՔԱՆԹԱՐԻ, ՊԵՅՐՈՒԹ, ՀԵՌ. 349816 2003 - 2004 ՏԱՐԵՇՐՁԱՆ 1. Հայ Աւետարանական քոլեճը ունի բողոքոյն մինչեւ Բ. պարալորտա դասարան: 2. 2003 - 2004 տարեշրջանի նախնական արձանագրութիւնները արդէն իսկ սկսած են հին եւ նորեկ աշակերտներու համար: 3. Նորեկ աշակերտներու դիմումագիրները կ'ընդունուին ամեն օր, Երկուշաբթիէն Ուրբաթ, կէսօրէ առաջ 9:30 - 12:30: 4. Վերամուտ 1 Շոկտեմբեր 2003: Նորութիւններ: »Շ. Ա. Բի 80ամեակի առթիւ կրթաթոշակի յատուկ սակեր »Բացառիկ գեղեր նորեկ փայլուն աշակերտներու »Բոլոր շրջաններու համար օթոպիւսի սպասարկութիւն »Վճարման դիւրութիւններ Հայ Աւետարանական քոլեճ, Սեքսիք փողոց, Քանթարի, Հայկազեան համալսարանին կից, «Թրատ» հիւանդանոցին դիմաց: ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԱՖՀԻԼ AFHIL ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ RENT AND SALE AT HOME •Wheelchair •Walker •Electric Bed •Manual Bed •Water Mattress •Cans •Sticks •Serum Tripod •Walking Frame •Over Bed Table •All Kinds Of Oxygen We Also Provide •Laboratory service. •Physiotherapist •Nurses Aids •P.T.S. (AMBULANCE) HOME MEDICAL EQUIPMENT SERVICES ՅՈՒՑԱՍՈՐԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՅՈՐ ԳՐԱՄԵՆԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԺԵՆԵ, Բ. ՅԱՐԿ ԵՆՈ. (01) 242556/7 NO MATTER WHAT YOU NEED... ... OR WHERE YOU NEED. ԵՐԻՆԻ ԷԷԷԷ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՊՈՒԱԾ ՀԱՐՑԵՐ ԵՐՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ...

Ծարուակուած Ա. Էջէն

նշուէր այս հարցին առնչուող տեղեկագիրին մէջ, սակայն հետագային դուրս բերուած է փաստաթուղթին:

Եւրոպական խորհուրդի Յունիսի նիստին պիտի արժարժուին ինքնավարութիւններու միջոցով շրջանային տագնապներ լուծելու ուղիները, որ կը իշխատակուի նաեւ Լեռնային Ղարաբաղը: Ըստ Արմէն Ռուստամեանի, ի տարբերութիւն Արխայիոյ եւ Հարաւային Օսեթիոյ, որոնք վարատանի կապմին մէջ են, Լեռնային Ղարաբաղը չի նշուիր անպայման Ազրպէյճանի կապմին ներս: «Սակայն փաստաթուղթին մէջ կան որոշ ձեւակերպումներ, որոնք որոշ ուղղութեան կարիք ունին», դիտել տուաւ Արմէն Ռուստամեան, որ վեհաժողովին մէջ հայկական պատուիրակութեան ղեկավարն է:

Վեհաժողովին պատգամաւորները պիտի քննեն նաեւ Ազրպէյճանի մէջ քաղաքական բանտարկեալներու հարցը: Այս առումով, հակառակ որոշ քարեյաման եւ Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւի հրամանագիրով հարիւրաւոր բանտարկեալներու ազատ արձակման հարցը տակաւին լուծուած չէ:

ՍՏԱՑԱՆԸ

«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԵԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ» ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ

Եղիմակ՝ Լ. Գ. ԽԱՉԵՐԵԱՆ Բանասիրական Գիտութիւնների դոկտոր, փոքրտետր ՀԱՅԱԿԱՆ ՍԱՏԵՆԱԶԱՐ ԳԱԼՈՒՍ ԿԻԼՄԵԼԿԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ Լիզպոն 2002

«COURS INTENSIF D'ARMENIEN ANCIEN» AVEC REPRISE ET TRADUCTION DES VERSIONS DU MANUEL PRATIQUE D'ARMENIEN ANCIEN DU MEME AUTEUR

Auteur: MARTIROUS MINASSIAN Ancien Maître d'enseignement et de recherches a l'Université de Geneve

BIBLIOTHEQUE ARMENOLOGIQUE DE LA FONDATION CALOUSTE GULBENKIAN Lisbonne 2002

«ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԲԱՐԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ» Եղիմակ՝ ՍԱՐՏԻՐՈՍ ՄԻՍՍԵԱՆ ՏՊԱՐԱՆ ԿԱՅՈՂԻԿՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՍԵՏԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ Անթիլիս-Լիբանան 2003

«ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ» «ՍՄԲԱՍ ԱՐԸ. ԼԱՓԱՃԵԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՖՈՒՆԸ. ԹԻՒ 4 ՏՊԱՐԱՆ ԿԱՅՈՂԻԿՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՍԵՏԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ Անթիլիս-Լիբանան 2003

«ARCHIVES SIRAPIE DER NERSESSIAN» CATALOGUE par SYLVIA AGEMIAN VOLUM I

ՀԱՅԱԿԱՆ ՍԱՏԵՆԱԶԱՐ ԳԱԼՈՒՍ ԿԻԼՄԵԼԿԵԱՆ ՀԻՍՏԱՐԿՈՒԹԵԱՆ CATHOLICOSSAT ARMENIEN DE CILICIE ANTELIAS - 2003

ԼՕՒԻ «ԿԱՐՍ» ՄԱՍՆԱՃԻՂ ԷՆԵՑԻԵ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 24 Յունիս 2003, առաւօտեան ժամը 9:30ին, «Ազատամարտ» ակումբին մէջ: Ընկերուհիներու ներկայութիւնը խիստ փափաքելի է: ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ազգային իշխանութեան Զաղաքական ժողովը կարիքը ունի Ազգային Առաջնորդարանի նոր դիւանապետի մը: Թեկնածու պարտի լրացնել հետեւեալ պայմանները. 1.- Տիրապետ հայերէն եւ արաբերէն լեզուներուն եւ ծածօթ ըլլալ անգլերէնի եւ ֆրանսերէնի: 2.- Ունենալ համալսարանական նուազագոյնը MBA կամ համազօր վկայական: 3.- Ընտու ըլլալ արդի վարչագիտութեան եւ փոխ յարաբերութեան ուսումնօր գիտելիքներուն: 4.- Ծանօթ ըլլալ տնտեսագիտութեան: 5.- Ունենալ լուրջ փորձառութիւն՝ վերոնշեալ մարզերուն մէջ: Թեկնածուները կը պահանջուի՝ Ներկայացնել իր կենսագրականը (CV)՝ հետեւեալ հասցին՝ - Ազգային Առաջնորդարան, Պուրճ Համուտ, Արաբ փողոց - կամ e-mail: azkayin@inco.com.lb - Fax: 01-258305 ԴԻՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

**ԽՄԲԱՎԱՐՈՒԹԵԱՐ
ԶԱՔԱՐ ՔԵՇԻՇԵԱՆԻ
ԼԻԲԱՆԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԻ
ԱՆԳՐԱՆԻԿ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ**



Լիբանանի Պետական Բարձրագույն երաժշտանոցի նորակազմ երգչախումբը իր անդրանիկ ունկնդրությունը մատուցեց երեկ՝ Ուրբաթ, 20 Յունիսի երեկոյան ժամը 6:30ին, Պետական երաժշտանոցի Չոքաթ Էլ Պլաթի կեդրոնին մէջ, ղեկավարութեամբ Զաքար Քէշիշեանի: Համերգին կը նախագահէր Պետական երաժշտանոցի տնօրէն Ուալիտ Դուլմիէ, որ իր բացման խօսքին մէջ ուրախութեամբ դիմաւորեց երգչախումբին անդրանիկ ունկնդրությունը եւ շնորհակալութիւն յայտնեց ղեկավարին եւ երգչախումբին անդամներուն:

Դաշնակի ընկերակցութեամբ Ռոյա Պաքլիհի, երգչախումբը մատուցեց Շոփէնի, Մոցարթի, Շուպերթի, Վիվալտի գործերէն եւ համաշխարհային երաժշտական այլ ստեղծագործութիւններ:

ԼԻԲԱՆԱՆԻ
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ԸՆԿԵՐԱԿԱՆ ԵՐԱՅՈՒՆԵՐՈՒ
ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՄԱՎԵՐՋԻ ԸՆԿԵՐԱԿԱՆ
Տեղի կ'ունենայ Գործընթացի, 25 Յունիս 2003, երեկոյան ժամը 6:30ին, «Չոքաթ Էլ Պլաթ», նախկին Կենցաղ վարժարան - Խալիլ Պատաուի:

ՃԻՆԻՇԵԱՆ ՅԻՇԱՍԱԿԻ ԶԵՆՆԱՐԿ
**ԱՄԱՌՆԱՅԻՆ ԽԱՂԱԿԱՅՐ՝
ԱՃԽԱՏՈՂ ԱՄՅՐԵՐՈՒ
ԶԱՄԱԿՆԵՐՈՒՆ ԸՄՍԱՐ**

Հիմնարկի Մանկամտերի նախաձեռնութեամբ կազմակերպուած է աճառնային խաղաղարկի յատուկ ծրագիր մը Ազգ. Զառանգից Մանկանց վարժարանի շրջափակէն ներս, Հինգշաբթի, 3 Յունիս Ուրբաթ, 29 Օգոստոս 2003: Ծրագիրը պիտի ընդգրկէ խաղեր, պտոյտներ, ցանե լեզուական եւ թուաբանական տարրական գիտելիքներ ու ընդհանուր գարգացման մղող աշխատանքներ: Աճառնային այս ծրագիրին կրնան մասնակցիլ 3էն 10 տարեկան երկուսն մանուկներ, որոնց մայրերը կ'աշխատին:
Ժամեր՝ Երկուշաբթին Ուրբաթ, առաւօտեան ժամը 8:00էն կէսօրը ետք ժամը 2:30:
Արձանագրութեանց համար անձամբ ներկայանալ, Ճիւղիցեան Մանկամտեր, Նոր Մարաշ, 23էն 27 Յունիս 2003, կէսօրուան ժամը 12:00էն կէսօրը ետք ժամը 2:00:

ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒԼԵՃ
2003 - 2004 ՏԱՐԵՇՐԶԱՆ

2003 - 2004 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են եւ պիտի շարունակուին մինչեւ 31 Յունիս 2003, ամէն օր (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն) ժամը 8:00էն 14:00:
Նորեկ աշակերտները պետք է ներկայացնեն անձնաթուղթի լուսապատճեն, նախկին վարժարանէ բարի վարուց վկայագիր եւ վիճակագրոյց, կրթական նախարարութեան կողմէ վաւերացուած փոխանցագիր եւ 3 լուսանկար:
ՄԱՆԿԱՄԱՍՈՒՐ կ'ընդունուին 4 ամիսէն սկսեալ մանուկներ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան որոշմամբ 2003 թ. Սեպտեմբեր 22 - 24ը Երեւանում իրականացուած է Հայաստան - Ափիւնջ տնտեսական առաջին խորհրդածողովը:
Խորհրդածողովը նախապատրաստելու եւ կազմակերպելու նպատակով ստեղծուել է միջգերատեսչական յանձնաժողով Հայաստանի Հանրապետութեան առեւտրի եւ տնտեսական գարգացման նախարար պարոն Կարեն Զըմարիտեանի գլխավորութեամբ:
Խորհրդածողովին իրականացուած են մասնակցելու գործարարներ եւ ձեռներեցներ:
Լրացուցիչ տեղեկութիւնների համար խնդրում ենք դիմել Լիբանանում եւ Սիրիայում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւններ, Հալէպում Հայաստանի գլխավոր հիւպատոսութիւն:

Լիբանանում Հայաստանի դեսպանութիւն
Հասցէ՝ 28 Ռի տե ժաման, Մթայլէպ
Հեռ. (04) 41 - 88 - 60

Սիրիայում Հայաստանի դեսպանութիւն
Մեզզե Զարբիա, Զաֆիի փողոց 13, Դամասկոս
Հեռ. (011) 613-09-52

Հալէպում Հայաստանի գլխավոր դեսպանութիւն
Էլ Զուաբիա 4, Թահա Հուսեյն 12, Հալէպ
Հեռ. (021) 268-72-40

**Հ. Յ. Գ. ՊԻՏԻ ԶՎԱՐԱՆԻ
ՉԻՆՈՎՆԻԿՆԵՐՈՒ ՀԵՏ ...**

Շարունակուած Ա. Էջէն

քին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի նախագահ ընկ. Արմէն Ռուստամեան անդրադարձաւ համաձայնական դաշինքի յուշագիրին անհրաժեշտութեան: «Մեզի համար կարեւոր է, որ այդ ծրագիրը թուղթի վրայ չմնայ: Մենք այժմ քաղաքական նոր իրավիճակ ունինք եւ այլեւս մեծ արժէք կը տրուի վերահսկողութեան», նշեց ընկ. Ռուստամեան: Ան տեղեկացուց, որ չսահմանափակելով տարեկան հաշուետուութեամբ, Հ. Յ. Գ. եւ այն նախարարութիւնները, որոնք կը ղեկավարուին Հ. Յ. Գ. ներկայացուցիչներու կողմէ, գործունէութեան հաշուետուութիւն պիտի ներկայացնեն պարբերաբար:
Հ. Յ. Գ. ներկայացուցիչները ընդգծեցին փտածութեան դէմ պայքարի անհրաժեշտութիւնը: «Հ. Յ. Գ. պիտի չվարանի չինովնիկներու (բարձրաստիճան պաշտօնատարներու) հետ իր յարաբերութիւնները սրելէ, եթէ այդ մէկը կը նպաստէ պայքարի յաջողութեան», դիտել տուաւ Արմէն Ռուստամեան: Ան նաեւ կարեւոր նկատեց փտածութեան դէմ պայքարին մէջ Հայաստանի նախագահին եւ ժողովուրդին մասնակցութիւնը: Լեւոն Մկրտչեան յայտնեց, որ փտածութեան դէմ պայքարի յատուկ մարմինի ստեղծումը օրակարգի վրայ պահելով հանդերձ, Հ. Յ. Գ. չի բացառեր գործող առանձին կառույցներու աշխատանքը այդ ուղղութեամբ: Ան նկատել տուաւ, որ այսօր արդէն կը գործէ հակամենաշնորհային յանձնաժողովը, որուն գործունէութեան վերաբերեալ մտադրական պարագային կրնայ ներդրում ունենալ փտածութեան դէմ պայքարին մէջ: Մկրտչեան տեղեկացուց, որ Հ. Յ. Գ. արդէն իսկ Ազգային ժողովին մէջ շրջանառութեան դէմ պայքարին նախագիծ մը, որ այժմ կ'ունում նախընտրելի քաղաքական ուժերուն կողմէ:

Ասուլիսին ընթացքին Արմէն Ռուստամեան անդրադարձաւ Սահմանադրական բարեփոխումներուն, շեշտելով, որ Հ. Յ. Գ. համոզուածով, սահմանադրական բարեփոխումներու ընդունումով Հայաստան յուրջ քայլ առաջ կ'ըլլայ քաղաքական համակարգի բարեփոխման ուղղութեամբ: «Ընտրական համակարգի բարեփոխման հարցը եւս օրակարգի վրայ է», ակնարկեց Արմէն Ռուստամեան:

- «ՎԱՍԱՅ ԶԱՅԵՒ ԱՅՍՈՐՈՒՄԱՆ ԱՅՍՈՐՈՒՄԱՆ ԱՅՍՈՐՈՒՄԱՆ»**
- Ժամը 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
 - Ժամը 9:30 Զաղաքական լուրեր/հայերէն
 - Ժամը 10:00 Անթրիպի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարէն Սրբ. պատարագի ուղղակի ձայնագրութիւն
 - Ժամը 12:30 Զաղաքական լուրեր/հայերէն
 - Ժամը 1:00 Ազգային-Յեղափոխական երգեր
 - Ժամը 2:30 Զաղաքական լուրեր/արաբերէն
 - Ժամը 2:45 Յունարեւ երգերու ունկնդրութիւն
 - Ժամը 4:30 Զաղաքական լուրեր/արաբերէն
 - Ժամը 6:30 Զաղաքական լուրեր/հայերէն

السيرة المستقبل
السيرة المستقبل
السيرة المستقبل
السيرة المستقبل
السيرة المستقبل

20 Յունիսի լիբանանեան օրաթերթերը լուսարձակի տակ առած են Փաուրի Ունեանի իր հանդիպումը Շարունի եւ Ապասի հետ, իրանի մէջ տիրող իրարանցումները եւ կորիկային նիւթերու գոյութեան շուրջ եղող քննարկումները, ինչպէս նաեւ իրաքեան վերջին պարագայները:
«Սաֆիր» գրած է, թէ Փաուրը կը խեղդուի փրկարկի պայմաններուն մէջ: Ըստ թերթին, լուրեր շրջան կ'ընեն Պուշի, Շարունի եւ Ապու Մալէնի միջեւ կայանալիք հանդիպումին մասին, որուն գլխավոր նպատակը պիտի ըլլայ իսրայէլական քարտէսին փրկութիւնը:
Ըստ «Լիուս»-ի, Փաուրը կը խօսի յառաջիկայի մասին եւ կը տեսակցի Շարունի եւ Ապասի հետ, իսկ փրկարկի յայտարարութիւնը կ'ապահովէ ամերիկեան եւ իսրայէլեան երաշխիքներէն:
«Քիֆաի Արապի»-ի համաձայն, Փաուրի շրջան այցելութեան նախաձեռնութեան կատարած անձնասպանական գործողութեան մը ընթացքին իսրայէլացի մը սպանուեցաւ: Պաշտօնի Ապասագրութեան ժողովրդական ձակաւոր կը մերժէ Ապու Մալէնի առաջարկած փրկարկի գաղափարը, իսկ Համաս եւ ժիհաւտ պայմաններ կը դնեն պայմաններ ընդունելու համար:
Ըստ «Նահար»-ի, հիւսիսային իսրայէլի մէջ անձնասպանական գործողութիւն մը կատարուեցաւ, իսկ իրեանքնակիներու եւ բանակին միջեւ բախումներ տեղի ունեցան:
Իրաքեան պարագայներուն մասին «Նահար» գրած է, թէ հարաւային Պաղատի մէջ ամերիկացի զինուոր մը սպանուեցաւ, որ երկու ամիսէն արդիւնքի մը հասնի եւ իր վճիռը արձակէ:
«Լիուս» գրած է, թէ Պուշ կ'ողջունէ, իսկ թեհրանի չի պատասխաներ առանց նախապայմանի իր կորիկային կապտարագի ձայնագրութեան մէջ քննարկութեան կատարելու միջոցառումները:
Ըստ «Քիֆաի Արապի»-ի, Կորիկային Ու-

նիսի Սիբապայի Գործակալութիւնը իրանէն կը պահանջէ առանց նախապայմանի իր կորիկային կեդրոններու քննարկութեան օրինակ: Այլ լուրերու կարգին «Նահար» նշած է, թէ Մեհուսեան Արաբիոյ մէջ «պարագայ» իսրայէլեան քարտէսին միջոցառումներ կը պահանջէ: Ապուլիա իշխան կը կ'ուղղէ երկրին մէջ յօսքի պատերազմի համաձայն:
Թերթին համաձայն, Յունաստանի մէջ Եւրոպական Միութեան վեհաժողովը սկսաւ իր աշխատանքին, իսկ այսօր կը քննարկուին սահմանադրութեան օրինակները:
Լիբանանեան իրադարձութիւններուն մասին «Սաֆիր» գրած է, թէ Լիբանանեան համալսարանի կ'օրորի տնտեսական սեղմումի քաղաքականութեան օրօրօցին մէջ եւ կարգ մը մասնաճիւղեր կը դիմադրուեն փակուելու սպառնալիքը:
Ըստ թերթին, ներքին գործոց նախարարութեան հաղորդագրութիւնը չլուծեց ընդհանուր ապահովութեան ուժերու ուժերու տնօրէնութեան եւ Պրիւրիի պլոքի անդամ նախարարներուն միջեւ տագնապը:
«Քիֆաի Արապի»-ի համաձայն, փոթորկոտ հիւսիսէն ետք կառավարութեան «հանդարտ» ժողովը ընդգրկեց ընդհանուր ապահովութեան ուժերու տնօրէնին դէմ սրբաբար: «Նահար» նշած է, թէ նոր թղթածրարներ կը սպանան Լահուտ - Հարիի հանդիպումին:
«Լիուս» դիտել տուած է, թէ վարչապետ Հարիի կը յայտարարէ, որ նախարարաց խորհուրդի նիստին պատահածը քաղաքական կանոնագիրին մաս կը կապուի, իսկ ժամայապի հետ իր յարաբերութիւնը հինէն կու գայ:
«Պայրաթ» անդրադարձած է այն իրողութեան, թէ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի Պուլկարիա կատարած յատուկ եւ արհիւանաւետ այցելութիւնը առիթ մը հանդիսացաւ քաղաքական եւ տնտեսական երկկողմանի սերտ գործակցութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գահիրէի Ազգային Առաջնորդարանը իր Ազգային վարժարաններէն մեկուն համար կարիքը ունի հայերէն լեզուի ազգ. ուսուցիչի մը, երկրորդական բաժնի վերի երեք կարգերէն հայոց լեզու եւ պատմութիւն դասաւանդելու եւ վարժարանի մնացեալ կարգերուն մէջ հայերէն լեզուին դասաւանդման գործընթացին հետեւելու համար:
Կ'ակնկալուի, որ թեկնածուները ունենան 12 - 20 տարուան հայերէն ուսուցման փորձառութիւն, իսկ իրենց տարիքը ըլլայ 40 տարեկան եւ վեր:
Թեկնածուներուն թոշակը պիտի որոշուի ըստ պարագայի եւ փորձառութեան:
Դիմումները կարելի է դրկել առաւելագոյնը մինչեւ 15 Յունիս 2003, հետեւեալ հասցէներէն մեկուն.
E-mail: armpategy@yahoo.com
Fax: (202) 5906671
Փոստի հասցէ. - 179 Ramses Street
P. O. Box 48 Faggala
Postal Code 11271 Daher,
CAIRO - EGYPT
ԴԻՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

30 ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
Կը բանախօսեն՝

ԸՆԿ. ՅԱԿՐԵ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
Հ.Յ.Գ. Լիբանանի Կ.Կ.ի անդամ

ԸՆԿ. ԱԼՊԵՐԹ ԱՃԵՄԵԱՆ
Հ.Յ.Գ. Բիւրոյի անդամ

• Գեղարուեստական Յայտագիր

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 24 Յունիս 2003, երեկոյան ժամը 8:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» հանդիսասրահին մէջ:

Հ.Յ.Գ. Լ.Ե.Ս.
30 ամեակ

ԵՐԿՈՒՍՏԵՔ ՊԱՏՐԱՆՔ

Ամերիկահայ կազմակերպությունները ներկայացուցիչներու հետ տեսակցութիւններ («Երկխոսութիւն») ունենալու թրջական փորձը կը միտի ստեղծել այն տպաւորութիւնը, որ Ռուսերի, իբրեւ «քաղաքակիրթ» պետութիւն, կը հաւատարմացնէր Երկխոսութեամբ լուծելու գաղափարին:

Թրջական կողմին հիմնական նպատակը ոչ թէ երկխոսութիւն, այլ երկխոսութեան... պատրանքը ստեղծելն է:

Այս նպատակով Ամերիկա դրկուած թուրք դիւանագէտ էճէտ Թեգճան յարողած է տեսակցութիւններ կողմէի առաջնորդը ինքնակարգ Պարսամեանէն (Նիւ Եորք), Հ.Բ.Ը.Մ.էն, ՌԱԿէն եւ (անշուշտ...) Արմինիըն էսէմպլիէն:

Հայ եւ թուրք յարաբերութիւններուն մօտէն հետեւող քաղաքական շրջանակներուն մօտ թրջական կողմը (այս պարագային Թեգճանի միջնորդ) փորձեց ստեղծել երկխոսութիւն հաստատած ըլլալու պատրանքը: Իսկ նշեալ հայկական կողմերը, «դիւանագիտութիւն խաղալու» իրենց շուտիկութեան մէջ, ունեցան «մեր տեսակէտները թուրքերոյ փոխանցած ըլլալու» պատրանքը:

Այնպէս որ, լուստատախտակին վրայ ԵՐԵՒՅՈՂ արդիւնքը 1-1 է, իսկ չեղեցող, բայց իսկական արդիւնքը, ըստ մեզի՝ հայկական կողմին համար խոշոր գերօ մըն է: Չէ՞ որ երեւոյթները շատ յաճախ խաբուսիկ կ'ըլլան եւ պէտք է խաբուիլ հրավառութիւններէն:

Ճիշդ կ'ըսէ Հայաստանի խորհրդարանի արտաքին յարաբերութեանց յանձնաժողովի նախագահ Արմէն Ռուստամեան, երբ կ'ընդգծէ, թէ հայ-թրջական երկխոսութիւնը հնարաւոր է այն պարագային, երբ բանակցութիւններ կայանան կողմերու ՕՐԻՆԱԿԱՆ ներկայացուցիչներուն միջեւ:

Տարբեր խօսքով, Թեգճանի հետ տեսակցած հայկական կողմերը քաղ պէտք է դիտանային, որ հայ-թրջական յարաբերութիւններու մէջ Հայաստանի ու հայութեան տեսակէտները ներկայացնող կողմը յստակ է՝ իր հասցնով հանդերձ: Երեւան:

Ըստ կարգ մը տեղեկութիւններու, Թեգճան վաղը միւս օր Լոս Անճելըս կը սպասուի: Դարձեալ սխալ հասցէ տրուած է իրեն, որովհետեւ թէ թրջական կողմը անկեղծ է երկխոսութեան իր ձգտումին մէջ, Նիւ Եորք-Անգարա եւ Անգարա-Երեւան օդանայանի գիծը աւելի նպատակայարմար է Թեգճանի համար: Մնացեալը պատրանք է:

ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ

ԶԵՐՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՅԵՏՆՈՐԴՆԵՐՈՒՆ ՆԵՏ

Շարաթ, 7 Յունիսին, Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի «Փէշէ-էրեան» կեդրոնին մէջ ջերմ հանդիպում մը տեղի ունեցաւ Քրիստափոր Միքայէլեանի թրուան՝ ծերունացարդ Ելենա Չելիափովայի (գուստոր Քրիստափորի զակին՝ Ռուբէնի), անոր զակին Նիքոլայի ու կնոջ՝ Իրինա Չելիափովայի ու զակներուն՝ Վերայի ու Նիքոլայի հետ:

Շէնքի մուտքին Ելենա Չելիափովա ու իր պարագաները դիմաւորուեցան Հ. Յ. Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի անդամներուն եւ Յակոբ ու Քնար Մանճիկեաններուն կողմէ: Հիւրերը յարգանքով առաջնորդուեցան շէնքի երրորդ յարկի հիւրասրահը, ուր ջերմօրէն դիմաւորուեցան Կեդրոնական Կոմիտէի միւս անդամներուն եւ ներկաներուն կողմէ:

Հ. Յ. Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Սալիպա բարի գալուստ մարդեց հիւրերուն եւ ըսաւ, թէ «հպարտ ենք ու յուզւած, որ Դաշնակցութեան այս յարկին տակ կը հիւրընկալենք մեր կազմակերպութեան հիմնադիրներէն Քրիստափոր Միքայէլեանի ժառանգորդները»: Ապա ան հակիրճ ձեւով ներկայացուց Դաշնակցութեան անցած ուղին, հիմնական նպատակները, որմէ ետք ծանօթացուց ներկաները: Նիքոլայ Չելիափով անզբնէն խօսակցութիւնը թարգմանելու ուսերէնի եւ փոխադարձաբար:

Ելենա Չելիափովա, իր կարգին յայտնապէս յուզւած՝ ըսաւ, թէ ամբողջ կեանքը խորհրդային Միութեան մէջ ապրած ըլլալով՝ տանամեակներով հետեւ մնացած է հայութեան ու հայկականութեան, ու ոչ ոքի կրցած է արտախաղաղ իր ընտանեկան արմատներուն մասին, վախճանով հալածանքէ: Ակնածանքով նայեցաւ Դաշնակցութեան հիմնադիր երրորդութեան մեծադիր լուսանկարին, ու իրեն բացատրուեցաւ, թէ աշխարհի որեւէ անկիւն, ուր հայութիւն ու Հ. Յ. Դ. Կեդրոններ կան, այս լուսանկարը կը զարդարէ այդ կեդրոններուն պատերը: Ապա ան իր ղողձի ձեռքերով ցոյց տուաւ վիզին գեղորդ, ուր մատի չափով տուկիկի մը մէջ գետեղւած էր «տատիկին» (Քրիստափորի) լուսանկարը:

Հիւրերը հետաքրքրուեցան Դաշնակցութեան ներկայ աշխատանքներով ու մեծապէս գնահատեցին այն փաստը, որ մեծ թիւով երիտասարդներ ներգրաւուած են այդ աշխատանքներուն մէջ: Նիքոլայ ցաւ յայտնեց, որ իր մայրը յառաջացած տարիքի բերումով չի կրնար Պուլկարիա երթալ՝ այցելելու իր մեծ հօր գերեզմանը:

Հանդիպումի աւարտին, Հ. Յ. Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէն փայտի վրայ փորագրւած Հ. Յ. Դ. գինանշան մը նուիրեց Չելիափով ընտանիքին, որմէ ետք ընտանիքին անդամները ծանօթացան շէնքին մէջ գտնուող գրասենեակներուն ու տարուող աշխատանքին:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
 «ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել ինտելեալ թիւերու՝ 258526, 260115 եւ 241274:

ՆՈՐ ՄԱՐՏԱՎՈՐԱԿԵՐՆԻ ՀԱՅ-ԹՐՋԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ներկայիս, երբ Հայաստանի նկատմամբ շուրջ մէկ տասնամեակէ ի վեր իրականացուող շրջափակումը ջնջելու հարցը պիտի քննարկուի թուրքերոյ բարձրագոյն ղեկավարութեան, մասնաւորապէս՝ ազգային անվտանգութեան խորհուրդին կողմէ, ակնյայտ կը դառնայ, որ հայ-թրջական յարաբերութեան, մասնաւորապէս՝ սպասուելի լուրջ տեղաշարժներ:

Ասոր զուգահեռ, կ'աշխուժանայ նաեւ թրջական դիւանագիտութիւնը՝ փորձելով երկխոսութիւն ծաւալել նոյնիսկ Միացեալ Նահանգներու հայկական նազմակերպութիւններուն հետ:

Թրջական կողմի այսպիսի քայլերուն իրական շարժառիթները պարզելու եւ անոր հիման վրայ համապատասխան քաղաքականութիւն մշակելու խնդիրը մեր քով արդէն չեւրել տարակարծութիւններու եւ բանավէճերու տեղի կու տայ:

Պատճառը այն է, որ մէկ կողմէ կ'արձանագրուի Հայաստանի ու հայութեան նկատմամբ թուրքերոյ թշնամական քաղաքականութիւնը պահպանելու փաստը, իսկ միւս կողմէ՝ Հայաստանի հետ սահմանը բանալու եւ տնտեսական գործակցութիւն ծաւալելու թուրքերոյ ձգտումը:

Մինչդեռ այս երկու գործընթացները ներկայիս կը ծաւալուին բոլորովին այլ իրողութիւններու եւրոպական խորհրդարանի թուրքերոյ վերաբերեալ ընդունած վերջին զեկուցումին եւ Միացեալ Նահանգներու մէջ Հայկական Յեղապահութեան ճանաչման հարցի քննարկումներուն լոյսին տակ: Ասոր պատճառով Հայկական Յեղապահութեան փաստը սճանչնալու թուրքերոյ թախանձազին խնդրանքները կը յանգին անոր, որ երկու պարագաներուն ալ «Ղուրկ երես» դուրս կու գայ Միացեալ Նահանգներու եւ Եւրոպական Միութեան իրական նպատակը՝ շրջանի «բացումը», շրջափակման ջնջումը:

Թուրքերոյ անկեղծութեան կամ երկկողմանի յարաբերութիւններուն բարելաման մասին խօսակցութիւնները իրականութեան մէջ կը քողարկեն ընդամենը մէկ հարց՝ կողմերուն պարտադրուող «ամուսնութիւն առանց սիրոյ» բանաձեւին գոյութիւնը: Թուրքիան, սկսեալով իր ներկայ սիրախաղը, նուրբ ձեւով կը փորձէ իրագործել իր հետեւեալ նպատակները:

Ա.- Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի մէջ ստեղծել հայ-թրջական յարաբերութիւններու բարելաման պատրանք կասեցնելու եւ թուլացնելու համար իր վրայ գործադրուող ճնշումները:

Բ.- Բարելաման մասին խօսակցութիւնները տարածելով Հայաստանի թուրքիա երկկողմանի յարաբերութիւններուն վրայ, հասնել թուրքերոյ տարածքային արժողողականութեան ճանաչումին՝ սահմաններու բացումին դիմաց:

Գ.- Առաջին եւ երկրորդ հարթութիւններուն վրայ հաւասարապէս ծախողելու պարագային

սահմանը բանալու եւ երկկողմանի առեւտուրի ծաւալումին խնդիրները դիտարկել իբրեւ Անդրկովկասի մէջ սեփական տնտեսական գերիշխանութեան հաստատումի ճանապարհ:

Թրջական դիւանագիտութեան կողմէ այսպիսի տարբերակներու զուգահեռ կիրարկումը ներկայիս հասած է այն հանգրվանին, երբ Եւրոպական Միութեան պահանջներուն ենթարկուելու եւ կասպից ծովուն ափերը արշաւելու Միացեալ Նահանգներու ծրագիրներուն թուրքերոյ մտադրութեան միջոցները (երկալուրջ դարձած են: Ուստի չի բացառուիր, որ թուրքերոյ քաղաքական ղեկավարութիւնը ի վերջոյ դիմէ հայ-թրջական սահմանի ապաշրջափակումին քայլին: Հարց մը կը յառաջանայ՝ արդեօք ասիկա մեր դիւանագիտութեան եւ Միութեան կազմակերպութիւններուն ծաւալած աշխատանքին յաղթական աւարտը պիտի ըլլայ: Համոզուած ենք, որ ոչ, որովհետեւ թուրքիա իր սահմանները պիտի բանալ ոչ թէ «եղբայրանալու», այլ Հայաստանը տնտեսապէս կայանելու եւ իրագործութեան տակ ձգելու համար:

Այսպիսի հաւանականութիւն, շրջանին մէջ Միացեալ Նահանգներու դիրքերուն ուժեղացումին պայմաններուն մէջ, ան իրապէս ունի: Պատճառը ակնյայտ է. թուրքիա ի վերջոյ պիտի փորձէ Միացեալ Նահանգներու եւ Եւրոպական Միութեան պահանջներուն դիմադրելու փորձերէն օգտուել շրջանին մէջ գերիշխանութիւն հաստատելու ամբողջական ծրագիրներէն՝ իր ներկայութեան ամրապնդելու համար: Աւելի նինչպէս որեւէ երկրի, նոյնպէս Հայաստանի շրջափակումին ջնջումը միակողմանի զիջում է, որովհետեւ միջազգային իրաւունքի տեսանկիւնէն շրջափակումը թշնամանքի եւ նախադրական արտախաղութիւններէն մէկն է:

Ուրեմն, այն նոր կացութիւնը, որ կրնայ ստեղծուիլ հայ-թրջական յարաբերութիւններուն մէջ, իրականութեան մէջ նոր մարտահրաւէր մըն է մեզի համար: Այդ մարտահրաւէրին հոգիները թրջական ծաւալապաշտութեան բնոյթին փոփոխութեան մէջ է՝ անոր տնտեսական բաղադրիչին առաջնահերթութեան ընդգծումով:

Հայ մարդուն յիշողութեան մէջ «թուրք» հասկացողութիւնը շուրջ 70 տարի պահպանուած է իր ամբողջ բարբարոսական կերպարանով: Այժմ անիւրովին այլ՝ շողքորթ, առատաձեռն եւ բարեհամբոյր առեւտրականի, գործարարի եւ պաշտօնային տեսքով: Կերպարանութիւնը այսպիսի «փոփոխութիւն» հոգեբանական լուրջ ազդեցութիւն պիտի գործէ հայուն բնորոշ սպասուող, ազնիւ եւ ոչ միշտ կայուն հոգեւոր շարժումները 180 աստիճանով հակառակ հակազդեցութեան մեր հասարակութեան մէջ: Այս ամէնը գիտակցելու եւ խորութեամբ

ընկալելու փոխարէն, մեր հասարակութեան մէկ մասը կրնայ տարուել նոր խաբկանքէն, զոր դիմագրաւելու համար պէտք է ոչ միայն պետական յատկաքաղաքականութեան մշակում, այլեւ՝ երկրին մէջ համապատասխան մթնոլորտի ձեւաւորում:

Պետական մակարդակով այսօր արդէն պարտաւոր ենք արձանագրել, որ հայ-թրջական սահմանը բանալով կարելիութիւնը Հայաստանի ու անոր տնտեսութեան համար ձեռնտու է միայն ու միայն մէկ իմաստով՝ թրջական հաղորդակցութեան միջոցները (երկալուրջ գիտները, նաւահանագիտները, մայրուղիները) օգտագործելով՝ երրորդ երկրները՝ Եւրոպա եւ Միջին Արեւելք դուրս գալու համար: Սակայն պէտք է մոռնալ, որ այսպիսի պարագայի նոյն առաւելութիւնը պիտի ստանայ նաեւ թուրքիա՝ Հայաստան եւ անոր վրայով այլ երկրներ թափանցելու համար: Ուրեմն, այս իմաստով կրնայ գոյութիւն ունենալ միայն երկկողմանի շահագրգռութիւն՝ մասնաւորապէս Գիւմրի երկաթուղիների վերագործարկման հարցին շուրջ: Այդ պատճառով ալ այսպիսի շահագրգռութիւն չի կրնար դառնալ տնտեսական առաւել եւս՝ քաղաքական որեւէ թեթիւքանքի շարժառիթ:

Իսկ ինչ կը վերաբերի սահմանային առեւտուրին, նախ այս իմաստով թուրքերոյ շահագրգռութիւնը Հայաստանի հետ տնտեսական կապերու վերականգնումի հարցին մէջ շատ աւելի մեծ է, որովհետեւ անոր արեւելեան շրջանները յայտնուած են տնտեսական խոր ճգնաժամի մէջ: Ունենալով աւելի աժան հումք եւ սննդամթերք, ինչպէս նաեւ աւելի կատարելագործւած մաքսային համակարգ, հայ-թրջական սահմանին բացումով թուրքիա կրնայ ձեռք բերել իր արեւելեան նահանգներու տնտեսական գրագացումը խթանող բան մը «սատախոյ»ներ:

Յայտնի է, թէ Հայաստանի հետ առեւտուրի հաշուոյն ինչպէս կը բարգաւաճին վրաստանի աղբյուրներէն, մասնաւորապէս Մատախոյի յարող շրջանը: Վաղը նոյն կարգավիճակին մէջ կրնայ յայտնուել իրտիւր, կարս եւ Արեւմտեան Հայաստանի միւս բնակատեղիները: Իսկ Հայաստանը՝ ընդհանրապէս, թրջական համեմատաբար աժան արտադրութեան, մասնաւորապէս սննդամթերքի ներմուծման պարագային պիտի կանգնի վերջին տարիներուն վերելք ապրող հայրենական արտադրութեան փութումին առջեւ:

Այսպիսով, թուրքերոյ կողմէ Հայաստանի հետ սահմանին բացումը հայերուն նկատմամբ իրականացուող «բարեգործութիւն» նկատելու, աւելին՝ ատոր փոխարէն քաղաքական պահանջներ ներկայացնելու բոլոր փորձերը ոչ միայն անըդունելի են, այլեւ կերտուածքին վրայ՝ յառաջ շարժումները 180 աստիճանով հակառակ հակազդեցութեան մեր հասարակութեան մէջ: Այս ամէնը գիտակցելու եւ խորութեամբ

DEFENSE ET ILLUSTRATION DE LA LANGUE FRANCAISE...

Ֆրանսական գրականութեան ծագումն ու որակական գարգացումը, այնպէս ինչպէս որ ան կը ներկայանայ, սկսած է ժՁ. դարուն, երբ խումբ մը մտաւորականներ հաւաքական աշխատանքով հրատարակեցին Ֆրանսերէնի պաշտպանութեան եւ ներկայացման յարտարարութիւնը, գիտակից՝ որ առանց ազգային որատարարութեան չէր կրնար լինել, արժէքաւոր գրականութիւն չէր ստեղծուեր: Հասկնալու համար ըսուածը, կարելի է բանալ Ֆրանսական գրականութեան գիրքերէն մէկը կամ միւսը:

Հայաստանի մէջ գոյութիւն ունի Լեզուի պետական վարչութիւն: Ի՞նչ կը բանի, շատ ալ յայտնի չէ: Այսօր, աւելի քան երբեք, մեր տեղատուութիւններու գումարման պատմական հանգրուանին, մեր վերապրումին համար կենսական է Հայերէնի պաշտպանութեան եւ գուման համազգային վարչութիւն մը ստեղծել, ներառելով Հայաստանի ու Միւլուքը, քանի որ մեր լեզուն համազգային աւանդ է: Յաւելեալ իրաւունքի հարց չի դրուել, այլ՝ յաւելեալ պատասխանատուութեան: Թող ոչ ոք զարմանայ, եթէ այդ զգացումը սուր լեզուով զգացողներ կան նաեւ Հայաստանի դուրս: ԺՁ. դարու Ֆրանսացիները չէին հիմա ժամանակը չէ: Ճիշդ է, որ լեզուն ժողովուրդին ստեղծածն է, բայց ոչ փողոցի եւ ոչ ամբոխի, մանաւանդ մեր պարագային, երբ ակամայ ենթարկուած ենք այլազան մշակոյթներու բիրտ ազդեցութեան:

Ֆրանսացիները ունեցան իրենց լեզուի պաշտպանութեան ընտիր փաղանգը, բանաստեղծներ, գրագէտներ, Ռոնսար եւ Տիւ Պելլէ, ուրիշներ, հետեւեցան Մալհերպ եւ Պուլալ, կարգ, կանոն եւ օրէնք սահմանեցին: Այսօրուան բիրեղացած լեզուն Ֆրանսացիները կը պարտին այդ յանձնառու մտաւորականներուն, որոնք ազգային հեռանկար ունեցան: Եթէ ամբոխային տրամադրութիւններէ հեռանանք, եթէ դադարինք գանոնք բաւարարելու ամբոխավարութեան, իբրեւ օրինակ ընդունելիք այս անգամ ոչ թէ հագուստ-կապուստի նորաձեւութեան Ֆրանսան, այլ՝ յիշուած դէմքերը, եւ իրապէս մտահոգուինք ազգային ճշմարիտ վերականգնումի հարցերով, ծնունդ կու տանք Հայերէնի պաշտպանութեան եւ գուման համազգային վարչութեան, որուն ոչ ոք ղէմ կրնայ ըլլայ, սկզբունքով, բայց կը միջամտեն անհանդիման լեզուի բազմաթիւ ազդակներ:

Այժմ ունինք ազգային պետութիւն, մշակոյթի եւ կրթութեան նախարարութիւններով, համալսարանով, բանասիրութեան կաճառով եւ Ակադեմիայով, Սփիւռք ունի հայագէտներ, հայ եւ օտար, բայց հարցը տակաւին օրակարգ չէ: Ե՞րբ կ'ըլլայ...

Թուրք պիտի չընեմ հայերէնը աղարտած եւ աղարտող օտարաբանութիւններու, շարահիսակային խաղաղականութիւններու, թուրք մը արեւելապետ պիտի չըլլայ: Ո՛վ չի գիտեր որ հայերէնը խեղամահ ըլլալու աստիճան ողողուած է օտար բառերով, երեւոյթ՝ որ լեզուի արդիականացման կարգախօսով չ'արդարանար, ինչպէս կ'ըսեն յոճախ, լեզուի արճամտան ենթարկուածներ, որոնք կ'ուզեն յաւերժացնել տեղատուութիւնները: Ազգային անկախ հայրենիքը, որ այս առաջելութեան միջնաբերդը պէտք է ըլլար, բացարձակապէս այդ դիրքերուն վրայ չէ, քանի որ կը շարունակուի սովետացուած հայերէնի բնական գործածութիւնը, պետութեան եւ մշակոյթի բոլոր մարգերուն մէջ, բնական դարձած սովորութիւններ, մանաւանդ երբ նկատուի:

Յ. ՊԱԼԵԱՆ
Շար-ը էջ 10

ՀԱՅ ԱԻԵՏ. ՔՈԼԷՃԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍԸ



Ուրբաթ, 13 Յունիս 2003 երեկոյեան ժամը 6:00ին, Հայ Աւետ. Ա. եկեղեցւոյ հանդիսարահին մէջ տեղի ունեցաւ Հայ Աւետ. քոլեճի մանկապարտէզի ամսվերջի հանդէսը:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերդներու յոռնկայ ունկնդրութեանց ետք, Հայ Աւետ. եկեղեցւոյ հովիւ վեր. Յ. Սվաճեանի արթթքով սկսաւ հանդէսը: Պաշտամունքի երգեր, հայերէն երգեր, հայերէն, արաբերէն, անգլերէն եւ Ֆրանսերէն արտասանութիւններ, հայկական, արաբական եւ այլ պարեր իրարու յաջորդեցին գեղեցկօրէն յարգարուած բեմին վրայ, որ կը ներկայացնէր քաղաքամէջը: Վարիչ - մանկապարտիզպանուհի Անի Եւնիսիսով հրաւերով տնօրէն Ջաւէն Մարտիան վկայական յանձնեց Յովիկ Արթիւնեանի, Յուլիկ Գալստիանի, Բայիկ Գլուխեանի, Իհես եւ Ճորճ Էքմէճեանի, Արման Նըտրըարեանի, Նարեկ Նազարեանի, Մէլիկ Պալի, Լեւոն Պապիկեանի եւ Շուշան Քէշիշեանի: Ան շնորհ գրաւ հայ պարողին առաջելութեան վրայ եւ ապա կատարեց փակման եւ ներհակալուութեան խօսքը: Հանդէսը փակուեցաւ հովիւին օրհնութեան աղօթքով:

Շար-ը էջ 9

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ՝ ԳԻՏՆԱԿԱՆ ՆԵՐՈՒ (... ԵՒ ԻՆՔՆԱԿՈՉ ՄԱՐԳԱՐԷՆՆԵՐՈՒ) ՆԵՌԱԴԻՏԱԿԻՆ ԸՆԴՄԷՋԷՆ



րնագէտ Սթեֆըն Հոփինկ եզրակացուցած է. «Չեմ կարծեր, որ մարդկութիւնը հազարամեակ մը եւս պիտի կարենայ գոյատևել»: Բրիտանացի աստղագէտ Մարթին Ռիֆը համաձայն է. անոր կարծիքով մարդկութիւնը հազարամեակ մը եւս իր գոյութիւնը պահպանելու 50 առ հարիւր հաւանականութիւն ունի միայն: «Տը Բամինկ Փլէյկ»-ի հեղինակ, «Փուլիթր» մրցանակակիր Լորի Կէրթթ աշխարհը կը գոչուցնէ արհեստագիտական բնոյթի աղէտէ: Գիտական «Տիսթաբլ» թերթի գլխաւոր խմբագիր Սթեֆըն Փեթրան էք շարքի տարածքին տարբեր համալսարաններու մէջ կը դասախօսէ «15 գլխաւոր վտանգներ՝ աշխարհի եւ կենսոլիվայ» նիւթին մասին:

կան պատերազմ մը մարդկութիւնը բնաջնջումի կրնայ առաջնորդել կամ առնուազն կրնայ վերջ տալ ճարտարարուեստի վրայ հիմնուած քաղաքակրթութեան: Եթէ լարուածութիւնը այնքան շեշտուած չէ այսօր Միացեալ Նահանգներու, Չինաստանի եւ Ռուսիոյ միջեւ, այդ չի նշանակեր, թէ կացութիւնը նոյնը պիտի մնայ: Հնդկաստան եւ Փարսիտան նոյնպէս կորիզային զէնքեր ունին: Հիւսիսային Քորէա եթէ տակաւին չունի, շուտով կրնայ ունենալ: Ճափոն կրնայ հետեւիլ Քորէայի օրինակին...:

Ստորեւ կը ներկայացնենք շարք մը համոզիչ եւ ոչ այդքան համոզիչ մարգարէութիւններ՝ երկրագունդի կործանման մասին:



Երկրագունդի կործանումի պահի պայթի, եւ մարդկութիւնը երկրին երեսէն պիտի չքանայ: Անշուշտ, եթէ մինչ այդ հսկայ երկնաքար մը չհարուածէ մեր մոլորակը կամ բնագիտական ուժերով երկրակեղծումը մարդկութիւնը անհետ կ'անցնէ:

Երբ կը խօսուի «դատաստանի օրունակ» մասին, շարք մը տեսութիւններ պարզապէս անհիմն եւ անիրապատ են: Այսպէս, օրինակ, ահաբեկիչներու կողմէ արձակուած հիւլէակային ռումբ մը անշուշտ կ'արհեստագործներ կրնայ ունենալ, յարձակումին թիրախ դարձած շրջանին կենսոլորտը կրնայ լուրջ կերպով վնասուիլ, հարիւր հազարաւորներ կրնան զոհ երթիլ, եւ ամբողջ սերունդներու վրայ հիւլէակային ճառագայթներու «մատնահետք» երբ կ'երեւին, սակայն կենսոլորտը կը շարունակուի աշխարհի մնացեալ տարածքներուն վրայ:

1.- ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՕՐԸՆՔՆԵՐ
1969ին Պերլինի պատին դիմաց կանգնած աստղագիտական Ռիչըրտ Կոթ Յրդ օգտագործեց թուաբանական բարդ բանաձեւ մը, որուն հիմամբ նախատեսեց, որ պատի պիտի գոյատևէ նուազագոյնը 2,66 եւ առաւելագոյնը 24 տարի: Պերլինի պատը փուլ եկաւ 20 տարի ետք: Աւելի ուշ, Կոթ միեւնոյն բանաձեւը օգտագործելով՝ հասաւ այն եզրակացութեան, որ 95 առ հարիւր հաւաստի է, թէ մարդկութիւնը տակաւին պիտի գոյատևէ առնուազն 205 հազար եւ առաւելագոյնը 8 միլիոն տարի այս նիւթին շուրջ իր յօդուածը հրատարակուեցաւ «Նէյչըր» թերթին մէջ:


3.- ԿԵՆՍԱՐԱՆԱԿԱՆ ՉԷՆՔԵՐ
Քիմիական գէնքերու նման, կենսաբանական գէնքերը եւս իրենց շուրջ ստեղծած



Ընկճուածութիւնը (depression), որ օրըսօրէ աւելի կը տարածուի Արեւմուտքի մէջ, կրնայ օր մը այնքան մը տարածուիլ, որ մարդիկ մերժեն իրեն անկողինէն դուրս գալ, կը ընկճուին փեթիկներով, կայն պէտք է յիշել, որ Մարսէլ Փրուսթ անկողինին մէջ էր, որ զրեց «Անցած բաներու յիշողութիւնը»:

Նշենք, որ Կոթի բանաձեւը նոյնքան ճշգրտութեամբ կրնայ «նախատեսել» հետաւոր ապագային մէջ պատահելիք զէպքեր, որքան կարելի է նախատեսել յառաջիկայ շարժումն օգտագործելով:

Քիմիական գէնքերը բնականաբար մեծ վնաս կրնան հասցնել, սակայն



6.- ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ
Անցնող հարիւրամեակին երկրագունդը մէկ ջերմաստիճան աւելի տաքացած է: Ջերմաստիճանի տաքացումը այդքան ալ վնասակար չէ եղած: Սակայն գիտնականներ փաստած են, թէ անցնող 1,6 միլիոն տարիներուն առնուազն 63 անգամ կլիման արմատական փոփոխութեան ենթարկուած է: Վերջին կլիմայական փոփոխութիւնը եղած է 10 հազար տարի առաջ, հետեւաբար դեռ ժամանակ ունինք...

կան փորձարկում մը սխալ ընթացք ստանալով՝ չոչնչացնէ Ադամի եւ Եւայի շատաւիղները...
Այս եւ նմանօրինակ սեւեռներու նախապէս կը հանդիպէինք գիտաբեւեակայական վէպերու եւ ժապաւէններու մէջ միայն: Սակայն այսօր անոնք թափանցած են պատկերասրահներ, վեպեր, վարկեր, վաւերագրական ժապաւէններ եւ, վկայ այս յօդուածը, օրաթերթեր: Որ կողմ ալ դառնանք, կը հանդիպինք կեղծ եւ անկեղծ տեսարաններու, որոնք կը կանխատեսեն Աստուածաշնչային աղէտներ: Այս տեսութիւններէն շատերուն մէջ նոյնիսկ մարդն է, որ ինքնակործան արարքներով իր աւարտին կը հասցնէ երկիր մոլորակին բազմադարեայ թաւալումը: Հիւլէակային պատերազմ, ծինային վերա-

թեամբ բազմապատկուող եւ տարածուող մանրէններու եւ ժահրերու պատճառած համաճարակներ, երկնաքարեր, «սուփըր-նովա» ներու պայթում, հրաբուխային ժայթքումներ եւ մասամբ նորին: Հաւանաբար ումանք մտածեն, թէ այս բոլորը անհաւասարակչիւ մարդոց կամ, լաւագոյն պարագային, յուստեսներու եւ իրենց երեւակայութիւնը անհարկի կերպով շարժողներու մտաղագացումն է: Սակայն տուեալները այլ բան կ'ըսեն: Արդարեւ, այս տեսութիւնները գարդացնողները «Փի. էյճ. Տի.» ներ ունեցող բնագէտներ եւ համակարգչագէտներ են: Այսպէս, օրինակ, խօսելով ծինային փոփոխութիւններու ենթարկուած ժահրերու մասին, աշխարհահռչակ աստղագէտ -

2.- ՔԻՄԻԱԿԱՆ ՉԷՆՔԵՐ
Քիմիական գէնքերը բնականաբար մեծ վնաս կրնան հասցնել, սակայն

գոժարութիւն արդարացնեն: 1971ին խորհրդային Ղազախստանի մէկ տարրալուծարանէն իբրեւ քիմիական գէնք օգտագործուող smallpox կեղրոնէն դուրս տարածուեցաւ: 3 հոգի մահացաւ, սակայն համաճարակ չյառաջացաւ: 1979ին Սփրտլոփսի (այսօր՝ Եկատերինպոլ) մէջ կեղրոնէն դուրս անթրաքսը տարածուեցաւ: 68 հոգի մահացաւ, սակայն նոյնպէս համաճարակ չյառաջացաւ: Այլ օրինակ մըն է բորոտութիւնը, որ միջնադարուն այնքան տարածուեցաւ, սակայն չյաջողեցաւ բնաջնջել մարդկութիւնը: Ի վերջոյ, հազարամեակներէ ի վեր մարդկային մարմինը եղափոխութիւններու կենթարկուի նման համաճարակներու զէմ լաւագոյնս կարենալ պաշտպանելու համար:

5.- ՀՐԱՐՈՒՆԵՐ
Կարգ մը գիտնականներ կ'առարկեն, որ երկրագունդին վրայ գոյութիւն ունին գերհրաբուխներ, որոնց ժայթքումը անբեւեակայելի աղէտ մը կրնայ հանդիսանալ: Այս գիտնականները կը վկայակոչեն դարեր առաջ տեսնուած նմանօրինակ ժայթքումներ: Ոչ մէկը գիտէ, թէ նման ժայթքումներ կրնայ տեղի ունեննալ...:



4.- ՍԵՒ ԾԱԿԵՐ (Black holes)
Կ'ենթադրուի, թէ գերհսկայ սեւ ծակ մը, որ

Պատրաստեց՝ ԽԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

Մանկապատանեկան

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾՔԻՆ

21 Յունիսը երաժշտութեան տօնն է: Այս գիշեր դուք պիտի կարենաք պտտիլ Պէյրուսի կեդրոնական շուկաներու փողոցներուն մէջ եւ իւրաքանչիւր անկիւնէ լսել տարբեր տեսակի, տարբեր ոճի եղանակներ, երգեր...

Սակայն գիտե՞իր, թէ աշխարհին շուրջ քեզի մօտ ուրիշ պտտիկներ ալ կը նուագեն տարբեր տեսակի, յատկապէս աւանդական երաժշտական գործիքներ:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Նեփալի սահմանակից Պիհար նահանգը Հնդկաստանի ամէնէն խիտ բնակչութեամբ նահանգներէն մէկն է իր 86 միլիոն բնակչութեամբ: Հոն կ'ապրի կաթողիկէ պատիկ համայնք մը, որ կը պատկանի Օրատն ցեղախումբին:

Այս ցեղախումբին պատանիները կը նուագեն հիւսիսային Հնդկաստանի յատուկ գործիք մը՝ փախաւայ կոչուած տախտակէ երկար թմբուկ մը, զոր նուագողները կը բռնեն հորիզոնական ձեւով եւ կը զարնեն անոր երկու կողմերուն:

Հնդկական դասական երաժշտութեան մէջ շատ կը գործածուին նաեւ կոնկը եւ նակարան՝ կաւէ գործիք մը, որ կը նուագուի երկու կողմէն անոր գաւազաններով:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Իրենց ականդական հագուստները հագած՝ չինացի աշակերտները չինական նոր տարին կը դիմաւորեն փողոցներուն մէջ պարելով: Իրենց տողանցքին կ'ընդմիջ տալու համար անոնցմէ իւրաքանչիւրը կը գործածէ զոյգ մը ծնծղայ՝ զգուշութեամբ ձեռքերուն ամրացուած կարմիր ժապաւէններով: Չինարէն պօ կոչուած այս գործիքը ծանօթ է աւելի քան հազար հինգ հարիւր տարիներէ ի վեր: Պղինձէ, արուրէ կամ անագապղինձէ չինուած այս պզտիկ ծնծղայները կ'արտաբերեն մետաղեայ ձայն մը, որ չինական կարգ մը օֆերանսներուն մէջ կը խորհրդանշէ հովը:



ՓՆՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Քունները կ'ապրին Փանամայի արեւելքի գտնուող Սան Պլաս կղզիներուն մէջ: Իրենց չափահաս տարիքի հասնիլը տօնապէս կը նշուի:

Ներու համար պատանիները կը պարեն նասիններ շարժելով: Այս մարաքանները նախ կը լեցուին հունտերով, խեցիներով, աւազով, եւ ապա կը գոցուին գաւազանով մը:

ՄԵՆ-ՔԻՑԵ-ԵՆԵԻԻ

Քարայիպեան կղզիներէն Մէն-Քիթց իր սթիլ տրամը (մետաղէ թմբուկ) առած է իր դրացիէն՝ Թրենիթէ - է - Թոպաբոյէն: Այս մետաղէ թմբուկը երեւան եկած է 1946ին, երբ 15 տարեկան պատանի մը՝ Ուինսթըն Սայմըն, 14 խաղերով փան մը ստեղծեց (կոթով սան), քարիւղի տակաւի մը խորքը մը հարեց: Այս երաժիշտը ներկայիս կը նուագէ հազար տղար արժող յատուկ թմբուկի մը վրայ:

ԹԱՅԼԱՆՏԻ ՄԷՋ

Ամէն առտու Փեչապարի դպրոցի աղջիկները կ'երգեն թայլանտի քայլերգը: Անոնց կ'ընկերակցի

դպրոցին երգախումբը, որուն գլխաւոր երաժշտական գործիքը կլոքսփինն է: Ինչպէս իր գերմաներէն անունը կը նշէ, այս գործիքը կազմուած է մետաղ-



եայ լեզուակներէ, որոնք գանգակի ձայն կը հանեն, երբ կը հարուածուին:

ՊՈՒՐՈՒՆՏԻ ՄԷՋ

Պուրունտի թմբուկը երկրին խորհրդանշն է: Ան չինուած է ումուկուկանկոմայէ, ծառի մը կոճղէն, եւ ծածկուած՝ եզի մորթով: Ժամանակին այս թմբուկը կը զարնուէր միայն թագաւորին կողմէ, կամ ցանի արարողութեան առիթով: Այժմ ան տղար արժող յատուկ թմբուկի մը վրայ:

ՄՒՍՏԵԱՆ ԵՎ ՀՆԴԱՍՏԱՆԻ ՄԷՋ


Նիւ Մեքսիքոյի Ալպը-

բըրքի շրջանին մէջ գունդները կը պարեն իրենց ծէսերուն մէջ գործածելով մարաքայի (սկիզբէն չորցուած դրուածի տեսակ) տեսակ մը, որուն ձայնը կը յիշեցնէ լուրի ձայնը: Միեւնոյն ատեն անոնք կը նշեն անձրեւը (թի տոքքիա), որ շատ հին ժամանակներէ պաշտուած է նստակեաց երկրագործ այս ցեղախումբին կողմէ:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Թիքսէյի մէջ, ինչպէս միւս բոլոր պուտայական տաճարներուն մէջ, պատանի վանականները շատ շուտ կը վարժուին համայնքային կեանքին: Անոնց պարտականութեան էր կանչուիլ կնա մը հարուածելով: Այս տախտակէ թմբուկը կը հանգչի ոտքի մը վրայ եւ ծածկուած է եաքի մորթով: Տասներեք տարուան ուսումնառութենէ մը ետք, այս վանականները միլիոնաւոր թմբուկի հարուածներ տուած պիտի ըլլան...

ԺԱՄԱՆՅ



Կրնա՞ս գրասչրջիկներուն ցոյց տալ նաւուն հասցնող ձամբան՝ բուրգերուն մէջըն:



Կրնա՞ս գտնել նոյնանման երկու եգիպտական դամբարանները:



Կրնա՞ս իւրաքանչիւր տիպարին վերադարձնել անոր պատկանող առարկան:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

www.hamazkayin.com

ԱՅԼԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Մասնագէտներ իտալիոյ մէջ գտած են աշխարհի վրայ մարդուն ձգած ամէնէն հին հետքերը: Անոնք դրոշմներն են մարդուն քրօմանիոն նախահօր եւ հրաբխային ժայռին մէջ քարացած են 325 հազար տարիներ առաջ: Այս նախապատմական մարդը կը քայլէր իր երկու ոտքերուն վրայ, սակայն ձեռքի հետքերը կը փաստեն, թէ ան երբեմն պէտք ունէր իր ձեռքերուն օգնութեան:



Աւստրիացի գիտնական մը իր եգիպտական հազարաւոր պապիրոսներուն հաւաքածոյին մէջ գտած է բացատրութիւնը «ճերմակ եւ կատարեալ ակունքեր ունենալու փոշի» պատրաստութեան:

Աշխարհի ամէնէն հին ակուայի դեղի պատրաստութեան բացատրութիւնը գրուած է մօտաւորապէս 2 հազար տարիներ առաջ եւ կը թելադրէ իրարու հետ խառնել աղ, պղպեղ, անանուխ եւ հիւրիկ կոչուած բոյս մը:

Գիտնականներ կրցած են պատրաստել ելեկտրական մեքենայ մը՝ ֆուլպուրի իրաւարարներուն օգնելու համար: Գնդակից եւ մարզիկներուն ոտքերը պաշտպանող




կտորներուն վրայ գետնաղուած մանր սարքերը շահանք կը դրկեն համակարգիչի մը, որ կը չափէ մարզիկներուն եւ գնդակներին հոն չէ:

ԿԻՆ ԵՐԶՊ ԳԻՐԵՐ:

Հիոնէն բանաստեղծ մը իր անձնական մրցանիչը կոտրած է՝ աշխարհի ամէնէն երկար բանաստեղծութիւնը գրելով: Այս բանաստեղծութիւնը կը պարունակէ 350 տող եւ 50 մեթր երկարութիւն ունի:

Չայն գրելու համար բանաստեղծը նստած է առեւտրական կեդրոնի մը մէջ եւ առաջարկած է անցորդներուն իրեն բառ մը տալ: Եւ այս ձեւով ան ամէն անգամ գրած է այդ բառով վերջացող ոտանաւորի տող մը:

Ճափոնական ընկերութիւն մը մը շինած է պզտիկ մարդամեքենայ մը, որ



մարդ արարածի մը կը նմանի: Ան կրնայ երգել, պարել եւ պարզ խօսակցութիւն մը ունենալ: Անոր հասակը 60 սմ է եւ կը կշռէ 7 քիլո: Երկու կ'ուզէ զայն անմիջապէս շուկայի իջեցնել, սակայն վատահ չէ, թէ ով կրնայ գնել: Անոր գինը համապատասխան է շքեղ ինքնաշարժի մը գինին:



նոնք օգտագործել իր խառնուրդը պահելու համար բոլորակները խառնուրդ կը հետաքննեն բոլոր այն անձերը, որոնք կը փորձեն մօտենալ, երբ վաճառականը հոն չէ:

ՀԱՐՑԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՈՒՄ


- 1) Ո՞ր կը գտնուի Ազատութեան արձանը:
 - Լոնտոնի մէջ
 - Նիւ Եորքի մէջ
 - Փարիզի մէջ
- 2) Ո՞վ է դեկալարողը Զուլցբերիան:
 - Թագաւորը
 - Նախագահը
 - Կառավարութիւնը
- 3) Ո՞վ հնարած է սաքսոֆօնը:
- 4) Այս լեզուներէն ո՞ր մէկը միջազգային է:
 - Ժամանակէն
 - Անգլերէնը
 - Էսպերանթոն
- 5) Ի՞նչ կը կոչուին հրաբուխներէն դուրս թափող հեղուկ ժայռերը:
- 6) Ե՞րբ տեղի ունեցած է ռուկպիի առաջին ախոյեանութիւնը:
- 7) Ի՞նչ կը կոչուի Տոն Քիլոթի ձին:
- 8) Ո՞վ թիւ 1ը մնացած է թենիսի աշխարհին մէջ 6 տարիներու ընթացքին:
 - Սամիլաս
 - Մաքընրօ
 - Պոլիս Պէքըր
- 9) Ո՞րն է էրիթրոյ մայրաքաղաքը:
- 10) Ո՞վ տարաւ Սուէզի ջրանցքին շինութեան աշխատանքները:
 - Էնէսթ Սուլվէյ
 - Պոլիք
 - Յերտինան տը Լեսսէփս
- 11) Ո՞ր մահացած է Նափոլէն:
 - Փարիզի մէջ
 - Էլպ կղզիին վրայ
 - Սէնթ-Ղեյնի մէջ
- 12) Սաթիւրնէն զատ որո՞նք են արեգակնային դրուածքներուն միւս երկու մոլորակները, որոնք օղակներ ունին:
- 13) Ի՞նչ կը կոչուի Բրիտանիոյ իրանտական բաժինը:
- 14) Ի՞նչ կը կոչուի այն նիւթը, որ հինուանները կը դնեն իրենց ճակատին վրայ:
- 15) 1858ին ո՞վ կ'ընտրէ Օթթմանի իրաւ Քանայի մայրաքաղաքը:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԷՋ 8

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՏՆԵՐ / ՅՈՒՆԻՍԱՆՆԵՐ / ԶԲՕՍԱԿՆԵՐ ԶՈՒՄԻՆԻՆԵՐ

ՊԵՅՐՈՒԹԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՆ ՄԵՋ ԱՅՍՕՐ ՊԵՏԻ ՏՕՆՈՒԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ



Ինչպես իւրաքանչիւր ամրան սկիզբը, այս ամառն էլ Պէյրութի փողոցները պիտի լցնեն երաժշտութեամբ: Այսօր, 21 Յունիսի երեկոյեան ժամը 6:00-ին սկստանալու է Պէյրութի Կեդրոնական քաղաքային կենտրոնի կողմէ: Առաջին անգամ 1982-ին Փարիզի մէջ կազմակերպուած այս փառատօնը հետագայ տարիներուն ընթացքին մեծ ծախսերով Պէյրութի քաղաքային կենտրոնի մէջ իրականացուած է ոչ միայն Ֆրանսայի, այլ նաեւ եւրոպական այլ երկրներու մէջ, հասնելով մինչեւ Լիբանան: Փառատօնին տօնախմբման ընթացքին կ'ընդգրկուին տարբեր անկիւններուն մէջ երաժշտական վանապահ ժանրերու գործեր ունկնդրելը մեծապէս կը հրապուրէ քաղաքներուն բնակիչները՝ մեծ թիւով անցորդներ հաւաքելով:

ՕՊԵՐԵՏՈՐ

ՀԱՐԱՐ,
21 ՅՈՒՆԻՍ 2003
ՊԵՅՐՈՒԹ
ԱՐԵՒՈՏ

ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆ
ՅԵՐԵԿ՝ 27°C

ԳԻՇԵՐ՝ 21°C

ԿՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝
79%

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Կաթողիկոսարանի բարերարներէն ՃՈՆ ԵՒ ԶՈՒԱՐՔ ԿՈՒՐՃԻ հոգիներուն համար հոգեհանգստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի յառաջիկայ Կիրակի, 22 Յունիս 2003, Ամբիօսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

Կը հրահրուին Ճոն Եւ Զուարթ Կուրճ Լաւալարանական Հիմնադրամէն կրթաթոշակ ստացած եւ ստացող նախկին եւ այժմու ուսանողները, ներկայ գտնուելու արարողութեան եւ իրենց արժանի յարգանքը ընծայելու ազնուահոգի եւ կրթամուտ բարերարներուն:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԶՈՐ ԶԱՍՄԻԿ ՏՈՄՊՈՒՐԵԱՆ - ԿՐԱՆԵԱՆԻ մահուան քառասունընդհարիւր, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Զալքայի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ին:

ԹԱԹՈՒԼ ՍՈՒՐԵԱՆԻ մահուան ժԸ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասուցից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱՄԲԻԿ ԶԷՆՏԵՐԵԱՆԻ մահուան քառասունընդհարիւր, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասուցից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՈՒՌԵԼ ԶԷՆՏԵՐԵԱՆԻ մահուան քառասունընդհարիւր, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասուցից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԵՓՐԵՍ ԶԷՇՈՇԵԱՆԻ մահուան Գ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Նոր Միսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Զալքայի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ին:

ՎԱՐԴՈՒՆԻ ԱՆՏՈՆԵԱՆԻ մահուան քառասունընդհարիւր, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Այնճարի Հայ Կաթողիկէ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ին:

ՆԱԶԱՐԵԹ ՆԱԶԱՐԵԹԵԱՆԻ մահուան քառասունընդհարիւր, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Ռըմէլի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌԻ ԹԻՒ 5467 Պատրաստեց՝ Ս.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

- | | |
|--|--|
| ՏՈՒՐՈՒՆԱԿԱՆ | ՈՒՂՈՒՆԱՅԵՍ |
| 1. Պատմիչ Ստեփանոս Տարսնեցի - Հակոբ Սեփիւն: | 1. Վանական - Ողբա՛: |
| 2. Յուրան - Մեծ մարտ: | 2. Սողոսկիլ - Գերազանց, աւելի բարձր: |
| 3. Իւղ - Ընդգայթ, վշկապարիք: | 3. Շողկապ - Քահանայ: |
| 4. Օգտակար հանածոյ (հակ.) - Կեղուէ՛: | 4. Առաքել, ուղարկել - Արգելական: |
| 5. Օրհնեցէք զԱստուած: | 5. Ճակնան, ցոփակեաց - Շարունակ: |
| 6. Դրամ: | 6. Սուրհական լրատու գործակալութիւն: |
| 7. Կրակ - Ցուցական անակա՛ն - Նմանածայն գիրք: | 7. Ժագ Յակոբեանի երկերէն: |
| 8. Յեսանէ՛ - Թափառում: | 8. Արարական մայրաքաղաք - Կրկնուած ձայնաւորներ: |
| 9. Եւրոպական հանրապետութիւն: | 9. Միանեալ ուլ - Վայրի արու ուղիար: |
| 10. Աղբիւր - Ասիական երկիր - Կրկին: | 10. Այլուրեղէն - Ցասկոտ: |

ԹԻՒ 5466

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Վ	Ա	Ջ	Ք	Ս	Կ	Ի	Ջ	Ք
2	Պ	Պ	Ա	Ս	Ե	Ա	Կ	Ք	Ք
3	Տ	Ա	Տ	Ա	Ս	Կ	Կ	Ա	Ա
4	Ա	Ռ	Կ	Ա	Ր	Կ	Ա	Ա	Ա
5	Հ	Ա	Ր	Ա	Ի	Ր	Ա	Ա	Ա
6	Ժ	Ա	Հ	Ջ	Ր	Ա	Ա	Ա	Ա
7	Մ	Մ	Ա	Ն	Ր	Ա	Գ	ՈՐ	Ա
8	Ն	Ա	Տ	Շ	ՈՒ	Կ	Ր	Ա	Ա
9	Ա	Ր	Ջ	Ա	Ս	Ե	Ր	Ա	Ա
10	Կ	Ա	Ռ	ՈՒ	Յ	Ք	Ա	Ա	Ա

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- 1) Նիւ Եորքի մէջ, 2) Նախագահ մը, 3) ԱտոյՖ Սաքս, 4) Էսփերանթո, 5) Լաւա, 6) 1987ին, 7) Ռոսինանթ, 8) Սամփրաս, 9) Ասմարա, 10) Ֆերտինան տը Լեսսեփս, 11) Մէնթ-Հելէնի մէջ, 12) Լուսնթագ եւ Ուրանոս, 13) Ալթեր, 14) Թիբա, 15) Վիթթորիա թագուհին:

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանին մէջ օտար դրամանոցներու փակման սակագինները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկ	32,35 - 32,45 լ.ն.
Իրաքեան տինար	4850,00 - 4860,00 լ.ն.
Քուէթեան տինար	5039,00 - 5064,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ն.
Պահարէնեան տինար	3986,00 - 4011,00 լ.ն.
Ա.Մ.Էմիրութեան տիրիամ	410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան ուիալ	413,75 - 415,75 լ.ն.
Մէնուական ուիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան ուիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կինէ	249,00 - 259,00 լ.ն.
Անգլիական սթրլինգ	2522,00 - 2532,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1137,00 - 1142,00 լ.ն.
Թրքական լիրա	106,00 - 106,50 լ.ն.
Կիպրական փառուտ	3000,00 - 3025,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,65 - 12,75 լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	13,10 - 13,15 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1118,00 - 1123,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	1008,00 - 1013,00 լ.ն.
Եւրո	1757,00 - 1767,00 լ.ն.

● **ՈՍԿԻ**

Անգլիական մէկ ոսկի	139,500 - 144,500 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	125,000 - 130,000 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	115,500 - 120,500 լ.ն.
Մեքսիքական փէտոս	665,000 - 685,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	17,350,000 - 17,550,000 լ.ն.
Մէկ օսն ոսկի	359,50 - 360,00 \$
Մէկ օսն արծաթ	4,55 - 4,57 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրո	1.1650 - 1.1657
Քանադական տոլար	1.3444 - 1.3454
Չուիցերիական ֆրանք	1.3236 - 1.3246
Ճափոնական եէն	118.31 - 118.41
Մէկ սթրլինգ	1.6733 - 1.6743
Մէկ դոլար	560 դրամ

● **ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ**

Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում

Ա. կարգ	5	5
Բ. կարգ	-	-

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՋԱՆԵԱՆ ՀԵՐ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)

Որքան կուտակուած գործեր ունիք կատարելիք, բազմաթիւ անձերու՝ հանդիպելու: Մինչդեռ դուք կ'ուզէք մեկուսանալ ձեր տան մէջ եւ կեդրոնանալ ձեր հոգեւոր մտքին: Սրափեցէք: Կարգով կատարեցէք աշխատանքները:

☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)

Հեռու մնացէք կարգ մը անհատներէ, որոնք ձեր մտերիմը ըլլալ կը ձեւանան: Մինչդեռ դուք գտնուիք հագիւլ թէ կը ճանչնաք: Շաղկապներ շատ կան ձեր շուրջը:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)

Եթէ առեւտրական էք, պիտի տեսնէք դժուարութիւններ: Բարեբախտաբար այս դժուարութիւնները անցողակի են: Օրը ունի նոյն ատեն այլ կարգի յաջողութիւն:

☆ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Եթէ գործառնութիւն մը ունիք, հարկ է որ յարգէք բոլոր կանոնները եւ գործին օրէնքները՝ մասնաւորաբար այդ գործերը պատրաստողներուն հետ: Եղէք պարտաճանաչ, ապա թէ ոչ արկածի մը կրնաք հանդիպիլ շուտով:

☆ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Ձեզի անձանօք մարզի մը մէջ դրամ յատկացնելը, կամ՝ ներդրում կատարելը սխալ է: Ուրեմն նախքան այդ գործին նախաձեռնելը թիչ մը մտածեցէք որպէսզի չվճարէք:

☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Անօգուտ կերպով կը վիճիք անձի մը հետ որ չարակամ է եւ նենգամիտ: Օրը պիտի աւարտէ յոգնած շիֆտով: Հեռու մնացէք այսպիսի անձերէ:

☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Եթէ մոլի հաւաքածոյ պահող մըն էք, ձեր շուրջիններէն թիչ մը դիտողութիւն պիտի ընեն ձեզի այդ մասին: Ուշադիր եղէք որպէսզի ձեր կիրքը չվերածուի անհամ հետապնդումի:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Յուստիք պիտի ըլլաք թատերական ներկայացում մը կամ այլ կարգի հանդիպումի մը, գոր կը ցանկայիք անպայման տեսնել: Մանաւանդ որ այս նախաձեռնութիւնը սուղ նստած է ձեր վրայ:

☆ **ԱՆԵՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Ձեր տան համար տեսակաւոր գնումներ կատարելու համար շուկայ պիտի երթաք. ձեր նպատակը գնել կարասիներ կամ այլ պիտոյքներ: Պարպ ձեռքով տուն պիտի վերադառնաք, որովհետեւ ատակ չէք նման գնումներ կատարելու:

☆ **ԱՅՄԵՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Մի պարտադրեք դուք ձեզի, ձեր տեսակաւոր ընդունիլ տալու համար ձեր խօսակցիներուն: Առիթ տուէք անոնց որ ներկայացնեն իրենց գաղափարները:

☆ **ՄՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Մի մոռնաք որ ձեզի հարազատ անձի մը տարեդարձը մ'օտեցած է: Ի՞նչ մը խոր մտածեցէք, անոր երազներուն համապատասխան նուէր մը ընծայելու համար:

☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Ձեր սիրեր վերաբերումի այն ձեւը, թէ անձ մը կ'ուզէ ձեզ նկատի առնել ամբողջ երեկոյի մը ընթացքին, իրեն օրուան աստղը: Ջանացէք ժպտուն դէմք մը ցոյց տալ ու ըլլալ հանոյակատար:

ԱՅՍՕՐ

- Երաժշտական հանդէս՝ «Լա Ֆէթ տը լա միւզիք», ֆրանսական երգերու երեկոյ, ժամը 20:00ին, Սէն Նիքոլայի աստիճաններ:
- Նկարչական ցուցահանդէս՝ Ռուսֆ Ռիֆայիի գործերը, «Ժանին Ռուպէյ» ցուցասրահ, մինչեւ 10 Յունիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ Մարսելլօ Կարոն-գիւնիի գործերը, «Ռոշէն» ցուցասրահ, մինչեւ 15 Յունիս:
- Ցուցահանդէս՝ «Տարած ալ ֆան», Սէն Նիքոլայի աստիճաններ, մինչեւ 22 Յունիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Թէն Վիուզ», «Էսփաս Էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 28 Յունիս:
- Թատրոն՝ «Սոյո», ժամը 20:30ին, «Մետիքէ» թատերասրահ, մինչեւ 21 Յունիս:

ԱԶԳԱԿ **50 ՏԱՄԻ ԱՌԱՄՁ**
21 Յունիս 1953

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՊԵՐԼԻՆԻ ՄԷՋ ՀԱՐԻՐ ՀԱՅԵՐ ԿԱՆ ՊԵՐԼԻՆԻ ՄԵՋ, ՈՐՈՆԵ ԿԸ ԶԲԱՂԻՆ ԳՈՐԳԻ ԵՒ ԾՆԱԽՈՏԻ ԳՈՐԾՈՎ

Այն օրէն ի վեր, երբ Պերլինը կղզի մը դարձաւ սովետական գրաման շրջանին մէջ, հայկական կեանքն ալ մարեցաւ այդ տեղ: Ժամանակ մը սովետական գործակալներ կը փորձէին ներքին մեր շատ մը ազգակիցները: Վախճալով թէ՛ երբ կազմակերպուին իբրեւ մշակութային միութիւն կամ համայնք, աւելի վտանգներ կը ծագէին անհատ հայրենակիցներու համար, նախաձեռնարակները եւս մեծապէս անհաւանական կերպով քայքայուին: Այս մտահոգութիւնը տեղիի եր, վանճիկ երկու հայեր երկու-երեք տարիէ ի վեր ըշուած են անորոշ ուղղութեամբ դէպի արեւելք:

Թէեւ գոյութիւն չունի ցարդ գաղթային կազմակերպութիւն մը, բայց Պերլինի հայերը շարունակ իրարու հետ շփման մէջ են ու եթէ առիթը ներկայանայ կարելի պիտի ըլլայ ստեղծել նոր միութիւն մը: Մինչ 1939ին Պերլինի մէջ հաստատուեցան կուլտուրային ունեցող մօտ չորս հարիւր հայեր կային, այսօր հազիւ հարիւր հոգի են, ուրբաւնը արեւմտեան եւ քսանը արեւելեան հատուածներուն մէջ:

Այստեղի հայերուն գլխաւոր գրա-

ԱՅՍՕՐ՝ 21 ՅՈՒՆԻՍԻՆ

- 1945- Շ. Յ. Գ. Բիրոյն յուշագիր՝ ՍԱԿԻ ընդհանուր ժողովին:
- 1952- Մահ Գարեգին Ա. Յովսէփեանցի, Կաթողիկոս Սեծի Տանն Կիլիկիոյ:
- 1993- Արցախի ինքնապաշտպանութեան ուժեր իրենց հակակշիռն տակ կ'առնեն Աղտամ - Մարտակերտ ռազմավարական նշանակութեամբ մայրուղին:

